Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԼԵՎԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԼՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

ԱՐԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԼՌՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

АРЛЕН ШАХВЕРДЯН

ЦЕНА МОЛЧАНИЯ

ARLEN SHAHVERDYAN

THE VALUE OF SILENCE

Երևան
Հեղինակային հրատարակություն
2014

ՀՏԴ 891.981-8 Շահվերդյան
ԳՄԴ 84 Հ-4
Շ 241

Շահվերդյան Ա.
Շ 241 Լռության գինը/Ա. Շահվերդյան.– Եր.: Հեղ. հրատ., 2014.– 92 էջ:

Գիրքը բնաճանաչողական, բնապահպանական և պատմամշակութային բովանդակությամբ «Ամբերդ. քարաշեն լեռը» ակնարկի և «Բծավոր տեսիլքը» պատմվածքի ներկայացումն է մեկ միասնական հրատարակությամբ: Առանցքում մարդ–բնություն և մարդ–մշակույթ հարաբերություններն են: «Ամբերդ. քարաշեն լեռը» ակնարկի հիմքում հեղինակի՝ Ամբերդ ամրոց այցելությունից ստացած իրական տպավորությունների նկարագրությունն է, իսկ ընձառյուծի մասին «Բծավոր տեսիլքը» պատմվածքի սյուժեն մտացածին է, գեղարվեստական մատուցմամբ, ճշգրիտ գիտական տվյալների օգտագործմամբ: Այս երկու ստեղծագործությունների միավորումը «Լռության գինը» մեկ ընդհանուր վերնագրով ընդգծում է արծարծվող թեմաների ընդհանրությունները և առանձնահատկությունները: Յուրաքանչյուր ստեղծագործությանը հաջորդում է համառոտ տեղեկանք:

Գիրքը հասցեագրված է ընթերցողների լայն շրջանի:

ՀՏԴ 891.981-8 Շահվերդյան
ԳՄԴ 84 Հ-4

ISBN 978-9939-0-1166-0

Գիրքը վաճառքի ենթակա չէ:

Գիրքը հրատարակվել է Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական աջակցությամբ

© Շահվերդյան Առլեն, 2014

ՀԵՂԻՆԱԿՆ ԻՐ ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ Է
ՀԱՅՏՆՈՒՄ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
(WWF) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ՝
ԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

АВТОР ВЫРАЖАЕТ ГЛУБОКУЮ БЛАГОДАРНОСТЬ
АРМЯНСКОМУ ФИЛИАЛУ ВСЕМИРНОГО ФОНДА
ДИКОЙ ПРИРОДЫ (WWF) ЗА ФИНАНСОВУЮ
ПОДДЕРЖКУ В ПУБЛИКАЦИИ КНИГИ

THE AUTHOR EXPRESSES DEEP APPRECIATION
TO THE WORLD WIDE FUND FOR NATURE (WWF)
ARMENIAN BRANCH FOR THE FINANCIAL SUPPORT
OF THE PUBLICATION OF THE BOOK

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԲԼՈԳ-ԿԱՅՔ

http://arlenshah.wordpress.com

E-mail: shahverdyan.arlen@gmail.com

Գրքում ներկայացված թեմաների վերաբերյալ հեղինակի հրապարակումները կարող եք գտնել նաև նրա անձնական բլոգ-կայքում

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սիրելի՛ ընթերցողներ, արդեն երկար տարիներ ես անսահման սիրով ու նվիրումով ստեղծագործում եմ բնության, բնապահպանության, մարդ-բնություն հարաբերության թեմաներով: Բնության մասին գրելը միշտ համարել եմ և այսօր էլ համարում եմ իմ ստեղծագործական գործունեության նախանշանակումը, նախընտրելի ժանրը, գրական թեմատիկ ուղղությունը, սիրելի բնագավառը, որտեղ ստեղծագործում եմ մեծ ոգեշնչումով, ազատորեն ու ջանադրաբար:

Իմ ընթերցողները գիտեն, որ իմ համեստ ու հետևողական ջանքերով մշտապես փորձում եմ նպաստել մեր հասարակության մեջ բնապահպանական ու բնաճանաչողական որակների ձևավորմանն ու զարգացմանը, բնապահպանական մշակույթի կայացմանը: Այս ամենը հատկապես վառ է արտահայտվում իմ հեղինակային բլոգ-կայքում (http://arlenshah.wordpress.com/):

Եթե ընթերցողների հետ յուրաքանչյուր հանդիպումից կամ իմ գրքերի, բլոգի բնապահպանական բովանդակությամբ նյութերի ընթերցումից հետո մարդիկ սկսում են ավելի հոգատար ու գիտակցված կերպով վերաբերվել բնությանը, ապա ջանքերս իզուր չեն: Դա հուսադրում է, ոգևորում, ուժ տալիս, որպեսզի ես, իմ գրքերի ու բլոգի միջոցով, ինչպես նաև կենդանի շփումների ժամանակ, շարունակեմ նույն ներշնչանքով և ոգևորությամբ սեր քարոզել բնության նկատմամբ:

Իմ նպատակն է ընթերցողների հոգում հետաքրքրություն առաջացնել, սեր և հոգատարություն սերմանել բնության նկատմամբ: Իմ համեստ կարողություններով ես

ջանում եմ ամենուրեք ու ցանկացած մեծ կամ փոքր լսարանի փոխանցել բնության պահպանության կարևոր հորդորը: Ինչքան որ ուժ ու եռանդ ունեմ, նույն ոգով շարունակելու եմ իմ այդ առաքելությունը, որպեսզի հնարավորինս շատ մարդ համակվի այդ զգացումով:

Բնությանը, մարդ-բնություն հարաբերության և պատմամշակութային ժառանգությանն է նվիրված իմ նոր գիրքը՝ «Լռության գինը» վերնագրով[1]:

Գրքում տեղ գտած առաջին արձակ ստեղծագործությունը «Ամբերդ. քարաշեն լեռը» վերնագրով գեղարվեստական ակնարկն է: Հայաստանում շատ կան պատմամշակութային զարդարուն կոթողներ, որոնք հիացնում են իրենց տեսքով, ճարտարապետական մտքով ու այդ միտքը կյանքի կոչելու շինարարական տաղանդով: Հոգևոր-մշակութային նշանակության այդ անգին կոթողներն, ասես, նախշազարդեր լինեն հայրենի բնության ընդհանուր կտավի վրա: Նրանցից ամեն մեկն ունի իր տեղը, չկրկնվող տեսքը, ուրույն դիմագիծը, պատմությունը, նշանակությունը: Դժվար է առանձնացնել այդ կոթողներից որևէ մեկը ու գրել միայն

---

[1] Հեղինակի նախորդ՝ «Զատիկ Լեոն» (Երևան, 2008), «Ամանորյա հեքիաթ» (Երևան, 2009), «Ապրելու իրավունք» (Երևան, 2011), «Սերը կանչում է» (Երևան, 2013) գրքերն արդեն ճանաչվել և սիրվել են ընթերցողների կողմից (տես՝ «Իմ գրքերը» (http://arlenshah.wordpress.com/my-books/)): Հատկանշական է, որ առյուծ կենդանատեսակին և աֆրիկյան վայրի բնաշխարհին նվիրված «Ապրելու իրավունք» գիրքը, իր բովանդակային ընդգրկումով և բնապահպանական հարցադրումով արժանանալով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) ուշադրությանը, լույս տեսավ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Գիրքը լայն արձագանք գտավ մասնագիտական շրջանակներում, ԶԼՄ-ներում, ընթերցասեր ու բնասեր հասարակության շրջանում: Այն նվիրաբերվեց մասնագիտական-բնապահպանական կառույցներին, կրթական հաստատություններին, գրանցվեց գրադարաններում, այդ թվում՝ ԱՄՆ-ի Կոնգրեսի գրադարանում (տես՝ «Ամենաընթերցվողը» (http://arlenshah.wordpress.com/arlen-shahverdyan-right-to-live-book/)):

դրա մասին: Սակայն, միևնույն ժամանակ, դրանց շարքում կան այնպիսիք, որոնք իրենց վեհասքանչությամբ ստեղծագործական ներշնչանքի աղբյուր են դառնում գրողի համար, և պարզապես հնարավոր չէ դրանք չներկայացնել:

Հենց դա է «Ամբերդ. քարաշեն լեռը» ստեղծագործության նպատակը՝ ներկայացնել պատմամշակութային այս յուրահատուկ կոթողը[2]: Երբ առաջին անգամ եղա Ամբերդում, հասկացա, որ տեսածը անհրաժեշտ է մատուցել, և որ ծնվում է գեղարվեստական նոր արձակ ստեղծագործություն: Սակայն Ամբերդում եղած ցանկացած ոք կվկայի, որ անհնար է գրել այս ամրոցի մասին, անհնար է այն նկարագրել՝ չանդրադառնալով հայրենի բնությանը: Իսկ լինելով անսահման բնասեր մարդ՝ ես այնքան կամրջող թելեր տեսա Ամբերդի ու մարդ–բնություն հարաբերությունների միջև, որ ինձ համար պարզ դարձավ. սկսում եմ գրել նոր ստեղծագործություն: Բացի այդ, կարծում եմ, որ Հայաստանի ռազմապաշտպանական-ամրաշինական ժառանգության հանրահռչակումը կարևոր է ռազմահայրենասիրական դաստիարակության տեսանկյունից, երիտասարդությանը կրթելու, ազգային արժեքներին հաղորդակից դարձնելու առումով:

Երկրորդ ստեղծագործությունը «Բծավոր տեսիլքը» վերնագրով պատմվածքն է՝ նվիրված այսօր Եվրոպա աշխարհամասի ամենախոշոր կատվազգի կենդանուն, որին ներկայումս խիստ հազվադեպ ենք հնարավորություն ունենում հանդիպելու նաև մեր բնաշխարհում: Ընդհանրապես

---

[2] Տես «Ամբերդ» (ՀՀ Մշակույթի նախարարության Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության պաշտոնական էջը (http://hushardzan.am/160/)), «Ամբերդ միջնադարյան բերդաքաղաք և ամրոց» (http://www.findarmenia.com/arm/sights/amberd):

Հայաստանի բնաշխարհը հարուստ է ու բազմազան: Կենսաբազմազանության տեսակետից մեր երկիրը յուրահատուկ է ամբողջ Հարավային Կովկասում: Մեր բնաշխարհի մի մասնիկն է նաև կովկասյան կամ առաջավորասիական ընձառյուծը, որին էլ նվիրված է «Բծավոր տեսիլքը» պատմվածքը: Այս բարեկազմ ու գեղեցիկ կենդանու թվաքանակը, ցավոք, չափազանց քիչ է. եթե նախկինում Հայաստանում մնացել էին ընդամենը մի քանի կովկասյան ընձառյուծներ, ապա այսօր մեր երկրի տարածքում (մասնավորապես՝ Հայաստանի հարավում) նրանց յուրաքանչյուր ներկայության գրանցումը իրադարձություն է[3]:

Կովկասյան ընձառյուծներն ունեն մեր հոգածության և պահպանության կարիքը: Այս ուժեղ կենդանին այժմ գտնվում է շատ փխրուն վիճակում՝ ապրելով առանց այդ էլ արդեն նույնքան փխրուն էկոհամակարգում կամ ժամանակ առ ժամանակ ներթափանցելով այդ էկոհամակարգ: Մեկ անզգույշ կամ անհեռատես քայլ՝ և մենք կկորցնենք կովկասյան ընձառյուծին: Ցավոք, լուրջ սպառնալիք է հատկապես որսագողությունը, որը թիվ մեկ խնդիրն է այս կենդանու անվտանգ գոյության ապահովման հարցում: Մենք պարտավոր ենք պահպանել նրանց, պահպանել մեր

[3] Տես «WWF-ի մասնագետները փաստում են կովկասյան ընձառյուծի մեկ արու և երկու էգ առանձնյակների առկայությունը Հայաստանի հարավում» (http://armenia.panda.org/?220314%2FWWF), «Ընձառյուծի պահպանությունը Հարավային Կովկասում (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան)», «WWF-ի ջանքերը ընձառյուծի պահպանության ուղղությամբ տալիս են իրենց արդյունքները» հոդվածները՝ WWF-Հայաստանի կայքում (http://armenia.panda.org/), *ինչպես նաև* «Հովազի հետքերով», «Անհետացման եզրին գտնվող Կովկասյան հովազը Հայաստանում», ««Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան»-ի տեսախցիկներն այս անգամ տեսագրեցին Կովկասյան հովազին ամբողջությամբ», ««Հովազային» քարոզարշավ» հոդվածները՝ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կայքում (http://www.fpwc.org/):

անկրկնելի բնության յուրաքանչյուր արարածին, չէ՞ որ նրանք բոլորն ունեն նույնպիսի ապրելու իրավունք, ինչպես և մենք: Իսկ պահպանելու համար պետք է ճանաչել, սիրել ու գնահատել՝ բնության յուրաքանչյուր արարածի համարելով յուրօրինակ գանձ:

Կովկասյան ընձառյուծն էլ է այդպիսի մի հազվագյուտ գանձ, որի պահպանության խնդրով վերջին տարիներին բնապահպանական կառույցների (մասնավորապես՝ «WWF-Հայաստան», «FPWC») կողմից գործադրվում են հետևողական ջանքեր, իրականացվել և իրականացվում են Հայաստանում ընձառյուծի պահպանմանն ուղղված ծրագրեր: Բոլոր այդ ջանքերը երբեմն նույնիսկ միավորվում են[4], քանի որ վայրի բնաշխարհի պահպանության խնդիրը հուզում է բոլորին: «Բծավոր տեսիլքը» պատմվածքում մասնավորապես ընդգծվում է կովկասյան ընձառյուծի պահպանության և այս խնդրի վերհանման հարցում WWF-Հայաստանի կարևոր դերը:

---

[4] Տես «WWF հայաստանյան մասնաճյուղը և FPWC-ին միավորում են իրենց ջանքերը Հայաստանում վտանգված տեսակների պահպանության համար» (http://armenia.panda.org/), *նաև* «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը Համագործակցության հուշագիր ստորագրեցին» (http://www.fpwc.org/), «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղը Համագործակցության հուշագիր ստորագրեցին» (http://www.sunchild.org/), «Մամուլն անդրադարձել է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի համատեղ մամուլի ասուլիսին» (http://www.yerevanzoo.am/), «Կովկասյան հովազի պահպանման ծրագիրը շահեց դրամական մրցանակ» (http://www.fpwc.org/index.php?id=1640), «Կովկասյան հովազի պահպանմանն ուղղված FPWC-ի նախագիծը ստացել է «National Geographic»-ի մրցանակը» (http://www.panarmenian.net/arm/news/177682/):

Վայրի բնության այս բացառիկ գեղեցիկ ու հազվագյուտ կենդանատեսակի, ինչպես նաև այլ կենդանատեսակների պահպանությանն ուղղված՝ WWF-Հայաստանի ջանքերի մասին առավել հանգամանորեն կարելի է ծանոթանալ մասնաճյուղի պաշտոնական կայքում[5]:

Սիրելի ընթերցողներ, ես փորձել եմ կամրջել այս երկու պատմվածքները, որոնց հիմքում սերը, գորովանքը, հիացմունքն ու հարգանքն է հայրենի բնության և պատմամշակութային ժառանգության նկատմամբ: Գրքի երկու «հերոսներին»՝ Ամբերդ ամրոցին և կովկասյան ընձառյուծին ներկայացրել եմ որպես բնության ընդհանուր պատկերի ուրույն և եզակի մասնիկներ. Ամբերդը՝ որպես մարդու ստեղծարար մտքի ու բնության հետ ներդաշնակության «կենդանի» մի հուշարձան, և ընձառյուծը՝ որպես բնության արարչագործության կենդանի «կոթող»:

Առլեն Շահվերդյան

06.02.2014

[5] Տես, օրինակ, «Խոշոր գիշատիչների պահպանությունը Հայաստանում» (http://armenia.panda.org/about_wwf/projects_armenia/completed/conservation_of_large_carnivores/):

ԱՄԲԵՐԴ.

ԲԱՐԱՇԵՆ ԼԵՌԸ

Վաղ առավոտյան ճանապարհ ընկանք դեպի ամրոց: Դիտարժան տեսարան էր, և շուրջը մի այնպիսի քար լռություն էր տիրում, որ կարծես լսվում էին հին ժամանակներում այստեղով անցած ձիերի սմբակների դոփյունները: Մառախուղը տեղ-տեղ թանձրանում էր, հատկապես՝ ճանապարհի այն հատվածում, որը հետզհետե բարձրանում էր ու կարծես մխրճվում լեռնալանջերով շրջապատված հորիզոնի մեջ: Իմաստուն լեռները և անխռով բլուրները, որոնք երիզել էին ճանապարհը, մի ընդհանուր կտավի գլխավոր հերոսներն էին, նրանցից բացի շուրջը գրեթե ոչինչ չկար: Ճանապարհի եզրերի ուղղահայաց սյուները կարծես միջնադար տանող «ցուցանակներ» լինեին, իսկ լեռնալանջերը ողողած կանաչ թփուտները՝ այդ ճանապարհով անցածների «արկածների» վկաները: Ճանապահի երկու կողմերում տեղ-տեղ քարաժայռեր էին, որոնք ասես կախել էին գլուխները և փորձում էին ականջ դնել, թե ինչ են շշնջում անցորդները: Մեր մեքենան, արհամարհելով այդ քարաժայռերի «հետաքրքրասիրությունը», շարունակում էր ընթանալ առաջ: Ժայռոտ բլրակների վրա նշմարվում էին քարանձավներ, ձեռակերտ էին դրանք, թե բնության արարչագործության արգասիք՝ դժվար էր կռահել ընթացքի մեջ: Ամեն դեպքում, այդ քարանձավներն ստեղծում էին մի խորհրդավոր տրամադրություն: Միևնույն ժամանակ դրանք շեղում էին գլխավոր տեսարանի սպասումից, և մի պահ տպավորություն էր ստեղծվում, թե այնտեղ, առջևում ոչ մի բան էլ չկա, թե այնտեղ՝ ճանապարհի վերջում, ամրոց գոյություն չունի: Ահա այդպիսի լռություն ու խաղաղություն էր տիրում շուրջը, և դա ստիպում էր կենտրոնանալ շրջապատող լեռնալանջերի վրա՝ մտքից հանելով գլխավոր նպատակը: Սակայն

որքան էլ տեսարանները հիասքանչ էին ու շուրջբոլորը՝ խաղաղ, միևնույն է՝ ներքին սպասումի մի ուրույն տրամադրություն էր իշխում, զգում էինք, որ առջևում մեզ ինչ-որ հիասքանչ բան է սպասում:

Կանաչ թփուտները մերթ մեծանում էին ու հիշեցնում նոսր անտառ, մերթ ավելի նոսրանում ու դառնում էին լանջերը զարդարող աղքատիկ մի «հագուստ»: Լանջերին ննջող սպիտակավուն խոշոր քարերը կարծես մարգարտահատիկներ լինեին, որ հատուկ տեղադրել էր բնությունը:

Հետո տեսարանը բացվեց, քանի որ քարաժայռերը մնացին հետևում, ու տեսադաշտն ընդարձակվեց: Հիմա արդեն միայն զանգվածեղ բլրակներն էին, որ լռելյայն հետևում էին մեր ճանապարհին: Որքան բարձրանում էինք վեր, այնքան մառախուղն ավելի էր թանձրանում, և մի պահ մեզ թվաց, թե հասնում ենք խորհրդավորության շղարշով պատված կախարդական հեքիաթի «խորքը», գլխավոր «թատերաբեմը»: Ճանապարհի այս հատվածում աչքի էին զարնում ճամփեզրից դեպի ձորը գլորվող քարերի կտորտանքները, որոնք մի յուրօրինակ շարժ էին ստեղծել այդ քար լռության մեջ: Լանջերին երևում էին ասես դրանց խորքից դուրս ժայթքած հրաբխային զանգվածներ, որոնցից ամեն մեկն ուներ իր ուրույն տեսքը:

Ճանապարհի երկու կողմերում բլուրները այնպես էին պատել այն, կարծես դարսված էին իրար վրա: Գեղեցիկ տեսարան էր՝ բլուրը բլրիի վրա, բլուր բլրի հետևից: Եվ դարձյալ մառախուղը, որը գրկի մեջ էր առել այդ ամենն ու միաձուլել ընդհանուր սպիտակագորշավուն երանգի մեջ:

Երբ բլուրները ավարտվեցին, ասես միանգամից մեր առջև վեր խոյացավ Ամբերդի ամրոցը: Ոչ մի բանի հետ չի համեմատվի այդ զգացողությունը. հիացմունք, անսպասելի

զարմանք ու սպասումի արդարացում, կամ՝ այդ ամենը միասին: Ճանապարհի ընթացքում իշխող մի տեսակ մեղմ, խաղաղ ու միապաղաղ հանգստությունից հետո ամրոցի տեսքը միանգամից արթնացնում է, զգաստացնում, հիացնում: Մի պահ անգամ չես էլ հավատում, որ 21-րդ դարում, տեխնոլոգիական զարգացման այս արագընթաց դարում դեռ պահպանվել էն միջնադարյան այսպիսի կոթողներ, որոնք միանգամից, «ձեռքի» մի շարժումով քեզ տեղափոխում են դարերի խորքը՝ կտրելով մերօրյա քաոսից ու առօրյա վազքից:

Քարակերտ այս ամրոցը գտնվում է մի հսկայական ընդարձակ վայրում և իր տեսքով ասես հանգրվան լինի, երկար սպասված հանգրվան, երկար ճանապարհից հետո որպես պարգև տրվող «հանգիստ»:

Ամբերդը շրջապատող ժայռոտ բլրակներն ու իջվածքները ստեղծում են մի յուրօրինակ պատկեր: Այդ ժայռաբեկորները, որոնցից մի քանիսն ասես կենդանություն առած առասպելական արարածներ լինեն, կարծես անմիջականորեն շփվում են իրենց կողքով անցնող մարդկանց հետ: Սուր անկյուններով ու, երբեմն, ահարկու տեսքով մեծ ու փոքր այդ ժայռաքարերն ու հսկա ժայռաբեկորներն այնքան մոտ են դեպի ամրոց տանող նեղլիկ արահետներին և այնպես են շրջապատում յուրաքանչյուր կածան, որ թվում է, թե քայլում ես՝ հաղթահարելով դժվարություններ, պատերազմելով առասպելական արարածների, դևերի ու չարքերի դեմ:

Իսկ ամրոցն անխռով է, այն բլրի բարձունքից հանդարտ ու խրոխտ նայում է ստորոտում իրենց նուրբ ճյուղերը դեպի երկինք ձգած ծառերին, ձորի մեջտեղով հոսող նեղլիկ գետակին ու լանջերին ասես թիկնած քարերին,

որոնցից յուրաքանչյուրը հիշեցնում է մի որևէ կետադրական նշան լանջի ընդհանուր «էջի» վրա: Ամրոցը դարերի խորքից իր խոսող հայացքն է նետում այդ ամենին՝ վերահաստատելով իր տեղն ու դերը ընդհանուր այդ պատկերում, հերթական անգամ ընդգծելով իր ուրույն երանգն ընդհանուր ներկապնակում:

Ի տարբերություն ամրոցի հանդարտ տեսքի՝ ներքևում տիրում է մի յուրօրինակ աշխուժություն, գետակն իր հունով հերթական անգամ «քերում» է ձորի հատակը, և արագահոս ջուրը մի հետաքրքիր ձայնափունջ է հավելում բնության մեջ լսվող սիմֆոնիային: Ձրամերձ հատվածում, ափերի երկայնքով աճում են թփուտներ, որոնք զարդարելու են գալիս գետակը: Այդ կանաչ զանգվածները վարագույրի նման կարծես «գրկում են» գետակն ու պատսպարում այն վերևից ահարկու կերպով ներքև նայող ու կարծես սպառնացող ժայռերից: Սակայն այդ կանաչ թփուտներն իրենց հերթին պատսպարվելու կարիք ունեն դեղնավուն ու չորացած խոտերի հսկա զանգվածներից, որոնք ծածկել են լեռնալանջերը՝ ընդհուպ մինչև գետաբերան: Այդ դեղնագորշագույն ֆոնի վրա կանաչ թփուտները նման են նկարչի վրձնից ծորացած կանաչ ներկի կաթիլների: Ձորի մյուս կողմում ցածր ու միջին բարձրության ծառերի ու թփերի մի հսկա զանգված է, որը ծածկել է բլուրներից մեկը՝ հիշեցնելով առանձնատան կողքին փթթող գեղատեսիլ այգի: Բլրի ստորոտից մինչև լանջ ու գագաթ կանաչ այդ զանգվածը շերտ-շերտ, ասես՝ աստիճաններով, տարածվում է վեր: Տարվա այդ եղանակին ընդհանուր կանաչի մեջ տեղ-տեղ նշմարվում են կարմրավուն, կարմրաշիկավուն տերևներով ծառեր, ինչը վկայում է, որ աշունը սարերի հետևում չէ: Եվ որքան էլ

կանաչը վերջին ճիգերն է գործադրում՝ մաքառելով ու համառորեն փորձելով մնալ լանջին որպես հիմնական գույն, միևնույն է՝ դեղին, կարմիր ու նարնջագույն երանգները վստահաբար ավետում են աշնան գալուստը: Տեսարանը չքնաղ է, այդ կախարդական այգում իրենց հրաշագեղությամբ ու գույներով աչքի են ընկնում բոլոր ծառերը, բոլոր ծառաթփերը:

Շուրջը վեր խոյացող լեռների ու բլուրների կողքին Ամբերդն ասես քարաշեն լեռ լինի, մի բարձունք, որ ստեղծվել է մարդու ձեռքով, սակայն հրաշալիորեն ներդաշնակվում է հայրենի բնության համայնապատկերին: Իսկ ահա հրվանդանը, որի վրա գտնվում է Ամբերդը, հիշեցնում է հսկա մի պատվանդան քարաշեն ամրոցի համար: Ամբերդը բազմել է այդ հրվանդանին՝ դառնալով բնության կողմից ստեղծված լեռնազանգվածի օրգանական շարունակությունը: Ընդհանրապես հայրենի բնության յուրաքանչյուր բարձունք ու իջվածք, անտառ ու դաշտ, գետ ու լիճ, լեռ ու ձոր միմյանց նկատմամբ գտնվում են բնական ու ներդաշնակ հարաբերության մեջ: Իսկ Ամբերդ ամրոցի ու բնության միջև այս յուրօրինակ հարաբերությունը վկայում է, որ բնությունն այնքան մեծահոգի ու բարի է, որ իր գրկում կարող է ընդունել անգամ մարդու ձեռքով ստեղծածը և այնպես գուրգուրել, հրաշալիորեն պահպանել, որ ակամայից տպավորություն ստեղծվի, թե եկեղեցին, ամրոցն ու բերդը, կամուրջն ու ճանապարհը, բուրգն ու աշտարակը նույնպես բնությունն է արարել: Սակայն մայր բնությունը, իր մեծահոգությամբ ու սիրով հանդերձ, եսամոլ չէ և ամեն ինչ չի վերագրում իրեն: Հակառակը, նա ստեղծում է մի այնպիսի վիճակ, երբ մարդու ձեռքով բնության գրկում ստեղծված շինությունը, միևնույն է, շարունակում է ներկա-

յանալ որպես մարդու ստեղծագործ մտքի, երևակայության ու տքնաջան աշխատանքի արդյունք: Այդպիսով մայր բնությունը արժանին է մատուցում մարդուն և ընդգծում մոլորակի վրա նրա տեղն ու դերը, նրա՝ որպես ստեղծարար մտքով օժտված արարածի բացառիկությունը:

Նույնը չի կարելի ասել մարդու մասին, որը, ցավոք, երբեմն այնքան է տարվում իրենով, որ հաճախ ի զորու չէ ոչ միայն գնահատելու բնությունը, այլ նաև պահպանելու այն: Սեփական գերիշխանության, գերակա դիրքի հաստատման սին ջանքեր գործադրելիս մարդը փորձում է «հաղթել» բնությանը մի պատերազմում, որը չկա, կամ որը միայն ինքն է սանձազերծում: Մարդը փորձում է ցույց տալ, որ ինքն է բնության տերը, սակայն նույն այդ տիրական նկրտումների մեջ մոռանում է, որ տեր լինել, չի նշանակում սպառել բնությունը, կեղեքել այն ու անխնա կերպով շահագործել: Տեր լինել՝ նշանակում է նաև պատասխանատվություն կրել, նշանակում է հոգ տանել, պաշտպանել, գնահատել ու սիրել, իշխել՝ ոչ թե վերացնելով ու ոչնչացնելով, ոչ թե ուժով ու բռնի կերպով, այլ արարելով ու բազմապատկելով, սեր, բարություն ու խնամք սերմանելով, համերաշխություն ու հանդուրժողականություն տարածելով, հավատ ներշնչելով և օգնելով: Արարչի իշխանությունը Երկրի ու ամբողջ տիեզերքի նկատմամբ նույնպես հիմնված է սիրո ու հավատքի վրա: Հենց այդ նույն սիրով ու խնամքով է ստեղծվել նաև տիեզերական մասշտաբներով արարչագործական չքնաղ ստեղծագործություններից մեկը՝ Երկիր մոլորակի բնությունը: Այն մոլորակի կենդանի բոլոր արարածների համար հավասար պայմաններ ստեղծող մի ընդհանուր տուն է բոլորի համար: Բնությունը մարդու համար իր քմահաճույքների իրականաց-

ման և անկուշտ ցանկությունների բավարարման միջոց չէ, կամ մեկանգամյա օգտագործման խաղալիք, որով կարելի է խաղալ ու դեն նետել: Ամենևին, բնությունը ամբողջ տիեզերքի Արարչի և մարդու միջև հավերժական սիրո և այդ սիրո նկատմամբ անշեղ հավատքը կամրջող ու ներդաշնակ միջոցն է: Իսկ սերը դեպի բնությունը մարդու՝ Արարչին ավելի մոտ ու հաղորդ լինելու հնարավորությունն է, որն ամրապնդում է նաև մարդու հավատքը հավերժականի, անեզր սիրո և բարեպաշտ ապրելակերպի նկատմամբ: Սերը դեպի բնությունը մարդուն մոտ է պահում բնության մյուս արարածներին ևս, ինչը օգնում է նրան չհեռանալ իր բնօրրանից, ինչպես նաև չխորթանալ ու չարհամարհել կյանքի կենսաբանական այլ ձևերին: Սերը դեպի բնությունը արդար միտքն է ու մաքուր խիղճը, որոնցով ապրում է մարդը: Նա չի կտրվում այն մայր կենսամիջավայրից, որտեղ ինքն էլ է սկիզբ առել ու զարգացել, այն կենսամիջավայրից, որն ստեղծվել է իրենից առաջ: Մարդը բնության մի մասնիկն է, և նրան տրված է մոլորակի վրա ապրելու հավասար իրավունք: Եվ միայն բնության, շրջակա միջավայրի հետ խաղաղության ու ներդաշնակության մեջ ապրելով է մարդը դառնում ընդհանուր տան կարևոր անդամը, իսկ որպես բանական էակ՝ այդ տան տերը, տան խաղաղության և անվտանգության պատասխանատուն, բոլոր կենդանի արարածների ապրելու իրավունքի պաշտպանության երաշխավորը: Անբացատրելիին որևէ կերպ բացատրություն տալու մարդու փորձերը սին են, իսկ խաղաղ ու ներդաշնակ ապրելու, սիրելու ու սիրված լինելու նրա մշտական ձգտումները ցանկալի արդյունք չեն տալիս, եթե մարդն ապրում է բնությունից անջատ՝ արհամարհելով կամ անտեսելով այն, ավելին՝ վնասելով բնությանը:

Մինչդեռ հենց բնության հետ խաղաղ ու ներդաշնակ գոյակցության շնորհիվ է մարդը վերագտնում իր ներքին երջանիկ, խաղաղ ու բավարարված վիճակն ու բարի, կամեցող տրամադրվածությունը շրջապատող աշխարհի նկատմամբ: Սերը բնության նկատմամբ չի սահմանափակվում գաղափարախոսություններով և դավանանքով: Մարդը կարող է դավանել ցանկացած կրոն, սակայն, միևնույն է, սիրել բնությունը: Սերը դեպի բնությունը չունի նաև սահմանումներ կամ անվանումներ, ինչպիսին, օրինակ, «բնապաշտություն» բառն է, քանի որ սերը բնության նկատմամբ պաշտամունք չէ, ոչ էլ գաղափարական ուղղություն կամ հոգևոր ուսմունք: Սերը դեպի բնությունը կենսաձև է, տրված կյանքը ապրելու ձևի ընտրություն, անփոփոխ հոգեվիճակ, կյանքի ու աշխարհի ուրույն ընկալում: Սերը դեպի բնությունը էություն է, իսկ էությունը արարչական ընդգրկում ունի*:

Աշխարհը, որում մենք ապրում ենք, այն ամենը, ինչը մենք ստեղծել ենք, գորշ ու անհրապույր, մռայլ ու անհետաքրքիր է առանց բնության, առանց կանաչ ծառերի, բուրավետ ու գեղեցիկ ծաղիկների, թռչունների դայլայլի ու գետերի կարկաչի: Եվ հակառակը, մեր ստեղծած «երկաթբետոնե միջավայրը» հարուստ, գունեղ ու վառ է լինում, եթե այն գտնվում է բնության հետ ներդաշնակության մեջ, եթե այն չի զատվում բնությունից: Ճիշտ է, մենք մեր կյանքը դարձրել ենք առավել հարմարավետ, կրճատել ենք միմյանց միջև տարածությունն ու ժամանակը, մեքենայացրել ենք շատ բաներ՝ առօրյան դնելով հարահոս ընթացքի մեջ: Սակայն այդ անվերջ եռուզեռի ու մշտական վազքի

* Հայերիս համար՝ ավելին, հայերեն լեզվում Արարիչը խորհրդանշում է այբուբենի 7-րդ՝ «է» տառը:

մեջ մի պահ պետք է կարողանանք տեսնել ու գնահատել այն, ինչի մի մասնիկն էլ մենք ենք: Որքան էլ մեր կյանքը տեխնիկապես հագեցած ու հարմարավետ է, որքան էլ քաղաքը լի է վայելքներով՝ ամենահարմարավետ, խաղաղ ու ներշնչանքով լի անկյունը մեզ համար, միևնույն է, շարունակում են մնալ վայրի բնությունը կամ քաղաքի մաքուր, կանաչ այգին կամ գողտրիկ պուրակը, որտեղ մի պահ կտրվում ենք նույն այդ քաղաքի կյանքի հորձանուտից, շնչում գործարանների արտազատումից մաքուր օդ, որտեղ մեր հոգիները խաղաղվում են ու լիցքավորվում ծառերի կանաչ սաղարթի ներքո: Ամեն անգամ բնությանը վնաս հասցնելիս պետք է գիտակցել, որ դրանով մենք ավելի գորշ ու մռայլ ենք դարձնում այն աշխարհը, որտեղ ապրում ենք, գիտակցել, որ վնասելով բնությունը՝ մենք ևս մեկ քայլ ենք անում դեպի մեր իսկ ստեղծած աշխարհի գունազրկումն ու իմաստազրկումը, կործանումը…

Եվ այս ամենը խիստ նկատելի է հենց լեռների գրկում վեր խոյացող Ամբերդ ամրոցի մոտ, երբ զգում ես, թե որքան կապված են եղել մեր նախնիները բնության հետ, և թե որքան ենք մենք այսօր, ցավոք, հեռացել բնությունից:

Ամբերդի ամրոցին նայելով հասկանում ես, թե որքան բնաճանաչ ու բնասեր են եղել այն մարդիկ, ովքեր ժամանակին բնակեցրել են այն, որքան սերտ ու անմիջական է եղել նրանց շփումը բնության տարերքի հետ, որքան զգալի է եղել բնության ազդեցությունը նրանց վրա և, միևնույն ժամանակ, որքան կարևոր է եղել այդ ազդեցությունը նրանց աշխարհընկալման ձևավորման ու զարգացման, գեղեցիկը տեսնելու ու գնահատելու հարցում: Այդպիսի ամրոց կառուցելը մեր նախնիներից պահանջել է իմացություն ու հարգանք բնության նկատմամբ, խնամք ու հոգածություն դրա

ամեն քարի ու թփի նկատմամբ: Ապշեցուցիչ է. որքան մեծ, գրեթե տիտանական ջանքեր են պահանջվել այս ամրոցը կառուցողներից, որպեսզի բնության այդ հեռավոր վայրում, անմատչելի ու զառիվեր բլուրների հարևանությամբ վեր խոյանա քարաշեն այդ գոհարը: Նրանցից պահանջվել է անսահման համառություն, համբերատարություն, կառուցողական փայլուն միտք ու ոգի, որպեսզի ամրոցը կառուցվի, և միևնույն ժամանակ հրաշալիորեն ներդաշնակվի բնության համայնապատկերին: Մեր նախնիների մոտ դա փայլուն է ստացվել, քանի որ նրանք բոլոր հայերի նման ունեցել են բնության նկատմամբ ժառանգական նախատրամադրվածություն: Հայերն իրենց պատմական հիշողությամբ միշտ կապված են եղել բնության հետ, քանի որ չեն վարել քոչվոր ապրելակերպ, սկիզբ են առել ու առ այսօր ապրում են իրենց պատմական բնօրրանում՝ մշտապես ձգտելով շենացնել այն: Հայը, իր ստեղծագործ էությամբ, իր հավատքով ու խելացի մտքով, մշտապես զգայական ու նյութական հարաբերության մեջ է եղել բնաշխարհի հետ՝ այնտեղից ստանալով իր ներշնչանքի ու ստեղծարար գործունեության կարևոր հոգևոր ազդակներ և նյութական բարիքներ՝ կեցությունը ապահովելու համար: Նախկինում հայը երբեք չի վերցրել բնությունից ավելին, քան անհրաժեշտ է եղել, ինչը բնության՝ մինչև մեր օրերը հասնելու գրավականն է: Իր կազմավորումից ի վեր բնության հետ խելամիտ, համեստ ու հավասարակշռված դարավոր հարաբերության մեջ լինելով՝ հայը շարունակել է քարից հաց քամել ու քարի վրա նախշեր անել, ջուր է հասցրել անգամ ամենադժվարամատչելի տեղերը՝ տափաստանը այգի դարձնելով և անուշահամ ու արևաշող բերք ու բարիք ստանալով, ցանել ու հնձել ցորենի, գարու

ու խոտի արտերը՝ չոր հարթավայրերը վերածելով գույների մեջ ծփացող թարմ ու անուշաբույր դաշտերի ու արոտավայրերի: Հայն իր բնույթով այգեպան է, հողի մշակ, ծառ խնամող: Գրեթե չկա մի հայ, որ ավելի հասուն տարիքում չձգտի ունենալ սեփական այգին կամ տնամերձ հողամասը, մեծ ու անհանգիստ աշխարհում իր փոքրիկ ու խաղաղ աշխարհը, իր գողտրիկ անկյունը, որտեղ նա զբաղվի հող մշակելով, ծառ ու ծաղիկ աճեցնելով, բերք ստանալով: Երիտասարդ տարիքում որքան էլ ակտիվ ու գործունյա կյանքով ապրի հայը, իր կյանքի մայրամուտին, երբ դառնում է ավելի տարեց, անպայման ձգտում է ունենալ սեփական տունը, այգին, որը խնամում է՝ ստեղծելով իր համար սիրելի ու հաճելի զբաղմունք, միևնույն ժամանակ, իր մեջ կարծես ակամայից վերակենդանացնելով գենետիկ կոդով իրեն ժառանգված բնասիրությունը և բնության նկատմամբ խնամքի, հոգածության զգացումը:

Այդպիսի հոգածության զգացումով ես լցվում, երբ դիտում ես Ամբերդը շրջապատող բնությունը: Զարմանահրաշ տեսարան է, հատկապես՝ շրջապատող ձորը: Ամբերդի շուրջը գտնվող ձորից բացի, յուրօրինակ «ձոր» կարելի է նկատել նաև հենց ամրոցի գագաթից ներքև նայելիս: Մենք բարձրացանք ամրոց, մտանք ներս, հասանք ամենավերին կետին և նայեցինք ներքև՝ բնության կողմից ստեղծված ձորի խորքը: Անձեռակերտ ձորի կողքին դա մի յուրահատուկ, «ձեռակերտ» տարածություն է, որը լցված է գույներով ու ձայներով: Ամրոցի պարիսպները տեղ-տեղ փլուզվել են ու շրջակայքն ավելի լավ է երևում: Գտնվելով ամրոցի ներսում՝ մի տեսակ խորը ափսոսանք ես ապրում, որ դարավոր այս շինությունը «մաշվել» է ու, դիմադրելով ժամանակին, այս վիճակում է հասել մեր օրերը: Սակայն

անգամ այսպիսին՝ ամրոցը հպարտ է ու զորեղ: Բերդապարիսպի բուրգերից ամենաբարձր կետից ներքև նայելիս ասես երկնքում սավառնող ազատ թռչուն լինես: Մի տեսակ սահմռկեցուցիչ գլխապտույտ ես զգում, որը, միևնույն ժամանակ, ազատության ինչ-որ հաճելի զգացում է: Քարի պես ներքև գլորվելու վտանգին միախառնվում է բուրգի գագաթից վերև թռչելու ու երկնքի կապույտի մեջ ընկղմվելու ցանկությունը: Երկինքն ասես դեպի իրեն է կանչում, բայց և հատակն է, որ ձգում է, ու դու սկսում ես մաքառել երկնքի ու երկրի ձգողականության ուժերի միջև:

Գմբեթներից մեկի վրա տեղադրված է եռագույն դրոշ: Մի նոր լեռնագագաթ գրավելիս մարդիկ դրոշ են տեղադրում. այստեղ ծածանվող եռագույնը կարծես խորհրդանշում է այն «սխրանքը», որ գործում ես՝ ամենաբարձր գագաթին ելնելով: Գագաթ, որի վրա ժամանակը կանգ է առնում և որից ներքև իրականությունն է:

Պարիսպների կամարաձև կամ քառակուսի պատուհաններից բացվում է հիասքանչ տեսարան: Նայելով պատուհանից՝ ասես դառնում ես մեկն այն քաջերից, որոնք բնակվել կամ միգուցե կռվել են՝ ամրոցը անառիկ պահելով: Ամրոցն ինքնին այնքան անառիկ է, որ մեծ քաջագործություն, անգամ՝ արկածախնդրություն է այն գրավել փորձելը: Պարիսպների որոշ հատվածներ քարուքանդ են եղել ու տպավորություն է ստեղծվում, որ նրանք ահեղ մարտից ողջ մնացած վիրավոր զինվորներ են:

Ամրոցի մերձակայքում խրոխտ իմաստնությամբ կանգնած եկեղեցին ժամապահի նման հսկում է ընդածակ տարածքը: Դեպի եկեղեցի տանող կածանը նեղլիկ է ու քարքարոտ, վայրիվերումներով: Եկեղեցուն հասնելու համար պետք էր իջնել բերդից. որքան դժվար է ամրոց

բարձրանալը, նույնքան և ավելի դժվար է իջնելը: Մի ոտքի սխալ դիրք և դու կգահավիժես ներքև: Մենք իջանք զգուշորեն, քարաժայռերից իջնող քարայծների նման վստահ գետնին դնելով մեր ոտքերը, բայց և լեռների վարպետ ձյունահովազի պես զգուշորեն հաշվարկելով ամեն մի քայլը:

Դեպի եկեղեցի տանող ճանապարհին նկատեցինք մի ծառ, որի ճյուղերին, հավանաբար ցանկությունների ու երազանքների իրականացման հույսով, կապված էին զանազան գույների կտորներ, լաչիկներ:

Ամբերդից դեպի եկեղեցի երկար ժամանակ իջնում ես, հետո ճանապարհը ուղղվում է ու սկսում ես մոտենալ եկեղեցուն: Եկեղեցու մատույցներում մի յուրահատուկ խաղաղություն պատեց մեզ: Այստեղ անգամ ամրոցն է անզոր, քանի որ հաղթահարելով Ամբերդը՝ ասես հոգու խաղաղություն ես գտնում եկեղեցու ներսում, որը մեծ չէ, բայց իր ոգեղենությամբ՝ անսահման է: Ներսում՝ քարին հենած խաչը, որպես հնություն ներկայացված կենցաղի քարաշեն ու կավաշեն իրերը, խաչքարերի կտորներ: Այդ «ինտերիերը» անմիջապես կտրում է քեզ ամրոցի ներսում հոգիդ պատած մարտական տրամադրություններից ու խաղաղությամբ է պարուրում, իսկ եկեղեցու գագաթին կուտակված գորշավուն ամպերը վկայում են, որ այստեղ անգամ երկինքն է խտացնում իր տրամադրությունները:

Ամբերդ ամրոցը: Լուսանկարներն արված են 2011 թ. սեպտեմբերին: Լուսանկարների հեղինակ՝ Առլեն Շահվերդյան:

Ամրոցը շրջապատող ժայռաքարեր:

Սուրբ Աստվածածին կամ Ամբերդի եկեղեցի:

Ամրոցի կիսավեր պարիսպները:

Ամրոցի կիսավեր պարիսպները:

Ամրոցի բարձր դիրքից ներքև:

Ամբերդը շրջապատող բլուրները աշնանը:

Ամբերդը շրջապատող բլուրները աշնանը:

Փոքր-ինչ մնալով եկեղեցու ներսում՝ ցանկանում ես դուրս գալ և ուղղակի շրջել դրսում՝ զմայլվելով ազատության անսահման զգացում հարուցող բնապատկերներով, հեռվում երևացող լեռնալանջերով, երկնքի ու երկրի հատման կետերով, աչք շոյող գույներով: Մի կողմում Ամբերդի ամրոցն է, մյուս կողմում՝ եկեղեցին, երրորդ կողմում երևում են կիսավեր շինություններ, որոնք ամրոցի համալիրի մասն են կազմել ժամանակին, չորրորդ կողմում դու ես՝ քո մտքերով, իրար խառնված զգացողություններով, մի տեսակ ներքին խռովքով, բայցև մինչև այդ պահը երբեևէ չզգացած ներքին խաղաղությամբ: Եվ զգացողությունների ու հույզերի այդ իրարամերժ ու իրարաբախ վիճակը փոխանցվում է ամեն մի բջիջիդ, և սկսում ես Ամբերդն ու շրջակայքը զգալ յուրաքանչյուր բջիջովդ, զգալ ու գնահատել, զգալ ու արժեքավորել:

Այս վայրերի վեհասքանչությունը չի սկսվում և չի ավարտվում Ամբերդով, այն սկսվում է շատ ավելի վաղ, ամրոց տանող ճանապարհից և ավարտվում այնտեղ, որտեղ հեռվում երևացող խրոխտ լեռներն այնքան մոտ են, որ թվում է կիպվես նրանց, թե ձեռքդ պարզես: Ահա այդ ամենն ընդգծում է ամրոցի գեղեցկությունը, հաղորդում նրան առանձնակի հմայք, սակայն երբեք չի նսեմացնում բուն շինության հզոր ու տպավորիչ տեսքը:

Վերադարձ դեպի ամրոց նույն կածանով ու այնտեղից էլ՝ դեպի մեքենաների կայանատեղի: Լռելյայն, ծանր քայլերով վերադարձանք:

Մենք հեռանում էինք այդ հսկայից, հեռանում մի տեսակ ներքին տխրությամբ. այնտեղ անցկացրած մի քանի ժամերի ընթացքում արդեն հասցրել էինք կապվել այդ քարաշեն ու լուռ «լեռան» հետ, հարազատանալ նրան:

Ամբերդն ասես վեհաշուք վկան լինի այդ վայրերի ոչ պակաս վեհաշուք գեղեցկության, և մենք մեզ այդ ընթացքում զգացել էինք այդ գեղեցկության մի մասնիկը: Եվ այդ զգացողությունը, որ քեզ կարևոր ու գեղեցիկ ես զգում, փոխանցվում է հենց Ամբերդի միջոցով, նա է կարծես վեհացնում քեզ, ստիպում մտածել, որ դու և միայն դու ես պահապանն ու տերը այս ամենի, որ քեզնից շատ բան է կախված, որ քո պատճառով շատ բան կարող է լինել կամ չլինել:

Ամբերդից հեռանալիս սկսում են մտորել՝ ո՞վ ես, ի՞նչ ես, ինչո՞ւ ես, ինչո՞ւ հենց դու ես… Հարցերի շարան, որը քեզ դեռևս մոտ է պահում տեսադաշտից, իսկ ավելի կոնկրետ՝ մեքենայի հետնապատուհանից, հետզհետե հեռացող Ամբերդից: Նրա լուռ պատկերը միևնույն ժամանակ այնքան խոսուն է: Ամբերդը լուռ է, նա կարծես ժամանակի հետ արդեն խոսել է այն ամենը, ինչ հարկավոր է ու ընդունել նույն այդ ժամանակի գերակայությունը: Նա հպարտորեն կրել և կրում է ժամանակի ազդեցությունը՝ իր ամեն մի քարով զգալով, թե որքան զորեղ է ժամանակը: Ամբերդը, գիտակցելով, որ ժամանակն իրենն անում է, շարունակում է պահպանել իր վեհ կեցվածքը՝ նույնքան վեհորեն կրելով քարաշեն լեռան «տիտղոսը»: Ամրոցը չի բողոքում ժամանակից, խոհեմաբար ու խոնարհաբար է ընդունել ժամանակի խաղի կանոնները և լռում է՝ խորին ըմբռնում ցուցաբերելով ժամանակի նկատմամբ: Սակայն Ամբերդի լռության գինը իր հետզհետե, աննկատ քայքայումն է, իր կյանքի հարատևության հարցը: Կանցնի էլի ժամանակ, և դարերով մեր օրերը հասած ամրոցը ավելի կծերանա, ավելի կմաշվեն ու կթուլանան այն կապերը, որոնք պահում են ամրոցի քարերը, ավելի շատ հողով կլցվեն քարերի այն անցքերը, որոնք այսօր հիացնում են

իրենց տաշվածությամբ: Ամբերդն ունի մեր հոգածության կարիքը, այս ամրոցը լայնատարած բնապատկերի պատմամշակութային փայլող գոհար է, որը կարող է խամրել ժամանակի ընթացքում:

Հեռանալով ամրոցից ու մի վերջին հայացք գցելով նրա վրա՝ համոզվում ես, որ հաստատ հետ ես գալու, այս անգամ արդեն՝ հայացքով գրկելով ու շոյելով ամեն մի քարն ու թուփը, որն այս ընթացքում քոնը դարձավ: Ամբերդից հեռանալիս խորապես համոզվում ես նաև, որ հայրենի ամբողջ բնությունն է քոնը, իմը, մերը, և յուրաքանչյուրիս ներսում ապրում է ու կապրի այսպիսի մի քարաշեն լեռ, հասկանում ես, որ մեր ներսի «Ամբերդը» կշարունակի անառիկ ու հզոր մնալ, եթե սիրենք ու պահպանենք հայրենի բնությունը:

ԱՄԲԵՐԴ. ՏԵՂԵԿԱՆՔ[6]

Ամբերդը միջնադարյան բերդաքաղաք և ամրոց է: Կառուցվել է Xդ. պատմական Արագածոտն գավառում՝ Բյուրական գյուղից 7 կմ հյուսիս, Արագած լեռան հարավային լանջին: Այն դիրք է գրավում Արքաշեն և Ամբերդ գետերի միացման տեղում՝ եռանկյունաձև հրվանդանին, 2300 մ բարձրության վրա: Դղյակը և պարսպի որոշ հատվածներ կառուցվել են VIդ., Կամսարականների օրոք: Xդ. պատկանում էր Պահլավունի իշխաններին և Բագրատունիների թագավորության ռազմապաշտպանական կարևոր հենակետերից էր: XIդ. 70-ական թթ. սելջուկները գրավեցին այն և դարձրեցին զորակայան: 1196 թվականին Զաքարե ամիրսպասալարը Ամբերդը ազատագրեց սելջուկներից: Ամրոցը որպես սեփականություն անցավ նրան: XIIIդ. սկզբին Ամբերդը դարձավ Զաքարյանների գործակալ Վաչուտյանների վարչական կենտրոնը: 1236 թվականին մոնղոլները գրավեցին և գրեթե հիմնովին ավերեցին Ամբերդը: XIIIդ. վերջին Վաչուտյանները վերակառուցեցին ամրոցը:

Պահպանվել են Ամբերդի դղյակի ավերակները, բերդապարիսպը, եկեղեցին, բաղնիքը և մի քանի այլ կառույցների մնացորդներ: Բերդն ունեցել է անկանոն եռանկյունու ձև: Խոցելի հատվածներում եղել են բուրգերով ամրացված պարիսպներ: Բերդապարիսպի բուրգերը կառուցվել են տեղանքի առանձնահատկություններից ելնելով, և ճանապարհների նկատմամբ մուտքերի հաշվենկատ դիրքավորման հետ ստեղծել են պաշտպանական անառիկ մի համակարգ: XIIIդ. վերջին Վաչուտյանները դղյակի

[6] Տեղեկույթը՝ ըստ www.findarmenia.com կայքի:

հյուսիսարևմտյան մասում ավելացրել են մի նոր մուտք և թշնամու առաջխաղացումը արգելակելու նպատակով Արխաշանի դարպասից հյուսիս կառուցել պարիսպ, որը կտրում անցնում է բերդն ամբողջ լայնությամբ: Արտաքուստ անմատչելի ամրոց հիշեցնող եռահարկ դղյակը տեղադրվել է բերդաքաղաքի հյուսիսարևմտյան, ամենաբարձր և միակ մատչելի մասում և ընդգրկել մոտ 1500ք.մ մակերես: XII-XIIIդդ. հյուսիսային կողմը լրացուցիչ ամրացվել է կիսաբոլոր բուրգերով հագեցված հզոր պարսպով: Բերդամեջ նայող դղյակի հարավային ճակատի վրա պահպանվել են վերին հարկերի լուսամուտների բացվածքները: Ապահովության համար ստորին հարկը լուսամուտներ չի ունեցել, այլ փոքրիկ մի մուտք, որը փակվել է սողնակավոր քարե դռնով: Դղյակի հարկերը միմյանցից բաժանվել են գերանների վրա գամած տախտակներով: Յուրաքանչյուր հարկ ունեցել է հատակագծում սեղանաձև սենյակ:

Ամբերդի եկեղեցին կառուցել է Վահրամ Պահլավունին 1026 թվականին: Առաջին եկեղեցիներից է, որոնք խաչթևերի չորս անկյուններում ունեն կրկնահարկ ավանդատներ: Ծածկի ծանրությունը թեթևացնելու նպատակով տանիքի տարբեր մասերում լիցքի մեջ տեղադրվել են կավե թրծված կարասներ: Եկեղեցին ունի մի քանի արձանագրություններ, որոնցից մեկը՝ կառուցման վերաբերյալ (ներսում, հյուսիսային պատի վրա):

Դղյակից հարավ, արևելյան պարսպի մոտ գտնվում է ամրոցի լավ պահպանված բաղնիքը (X-XIդդ.), որը թաղածածկ քարե շենք է՝ փոքրիկ հանդերձարանով, համեմատաբար ընդարձակ լողասրահով, արևմտյան ծայրի կրկնահարկ բաժանմունքներով, որոնցում տեղակայված են եղել ջուր տաքացնելու կաթսան ու ջրամբարը: Ձուրը

բաղնիք է բերվել կավե փողրակներով, իսկ տաք ջուրը լողասրահ՝ երկաթե խողովակներով: Հնոցի ծուխը, անցնելով հատակի տակով, դուրս է եկել պատերի ծխնելույզներով՝ տաքացնելով լողասրահի հատակն ու պատերը: Ամբերդի ջուրը 4-5կմ հեռավորությունից բերվել է կավե խողովակներով: Դղյակում և բերդամիջում պահպանվել են ջրամբարներ: Բերդաքաղաքի հարավարևմտյան կողմից բացվել է սալածածկ գաղտնուղի (գետնուղի) պաշարման ժամանակ ջուր վերցնելու համար: Բաղնիքի մոտ պահպանվել են փոքրիկ մատուռի ավերակներ:

Ամբերդի պեղումների ժամանակ հայտնաբերվել են մետաղե իրեր, զենքեր, զարդեր, խեցեղեն, ապակի, դրամներ և այլն, որոնք խիստ արժեքավոր են միջնադարյան Հայաստանի տնտեսական, ռազմական և մշակութային կյանքի ուսումնասիրման համար:

ԲՈՇԱԿԱՐ
ՏԵՍԻԼՔԸ

Այս պատմությունը սկսվեց Երևանի կենդանաբանական այգում: Լինելով մեր կենդանաբանական այգու մեծ սիրահար՝ դեռ փոքր տարիքից մշտապես այցելում եմ, ուսումնասիրում այն, իսկ պատանեկան տարիքում նույնիսկ պահ եղավ, երբ հնարավոր էր, որ անգամ աշխատեի այնտեղ՝ որպես «юнат» («юный натуралист»): Այ, այդպես սիրում էի ու սիրում եմ մեր այգին, և սիրտս ցավում է նրա համար:

Հերթական անգամ այցելել էի այգի՝ իմ հեղինակային կայքում տեղադրվելիք ապագա հոդվածի համար տեքստ պատրաստելու նպատակով: Հոդվածում ես ոչ միայն անդրադառնալու էի այգու գործունեությանը, այլև փորձելու էի ներկայացնել հասարակություն-կենդանաբանական այգի կապը:

Շրջեցի այգում, հետո նստեցի այգու սրճարանում, բացեցի «նոթբուքս» և սկսեցի գրել. «Կենդանաբանական այգին մեր հասարակության և, հատկապես՝ դրա բնասեր հատվածի ոչ միայն ավանդական սիրելի վայրերից մեկն է, այլև մեր քաղաքում վայրի բնության գիտակրթական օջախներից մեկը՝ որպես կենդանի, շնչող մի օրգանիզմ: Այդ օրգանիզմի զարկերակի անխախտ աշխատանքը մեր բոլորի պատվի գործն է: Հարկավոր է պարուրել մեր սիրելի այգին հոգատարությամբ և ուշադրությամբ ու դնել մեր հոգատար ձեռքը այգու «զարկերակին»՝ մշտապես զգալով նրա կյանքի ռիթմը: Հասարակությունը պետք է լինի հոգատար, պահանջող ու հետևողական, փորձի հնարավորինս աջակցել այգուն՝ յուրաքանչյուրն իր ունեցած լծակներով ու հնարավորություններով, որպեսզի մեր սիրելի այգին, վայրի բնության մեր այս գողտրիկ անկյունը դառնա բոլորիս հպարտությունը և պետության բնապահպանական այցեքարտը տարածաշրջանում:

Երևանի կենդանաբանական այգին մշտապես եղել է վայրի բնության յուրահատուկ մի օազիս: Ցանկացած կենդանաբանական այգու զարգացման գագաթնակետը դրա վերածումն է գիտահետազոտական-բնապահպանական կենտրոնի, որը համագործակցում է աշխարհի առաջատար բնապահպանների ու կենդանաբանական այգիների ու մասնագիտական կառույցների հետ և իր կարևոր լուման է ներդրում առանձին պոպուլյացիաների, հազվագյուտ ու անհետացող կենդանատեսակների պահպանության, բազմացման ու դրանք վայրի բնություն վերադարձնելու գործում: Այսօր Երևանի կենդանաբանական այգին, ժառանգելով տարիների փորձն ու պատմությունը, շարունակում է զարգանալ՝ մարդկանց ավելի մոտեցնելով բնությանը, սովորեցնելով ավելի հոգատար ու գորովալից վերաբերվել հայրենի ֆլորային և ֆաունային, բնությանը՝ առհասարակ…»:

Դադարեցի գրել, վեր կացա ու շարունակեցի շրջել այգում: Վայրի կենդանիներին դիտելը ինձ համար պահանջի պես բան է: Ես հափշտակված դիտում էի, թե ինչպես են գորշ արջերը աշխույժ խաղում ընդարձակ վանդակում, ինչպես են կապիկները զննում այգու այցելուներին, ինչպես է քայլում ազնվացեղ եղջերուն, ինչպես է ջրավազանի մեջ արևի շողերը վայելում հսկա գետաձին, ինչպես է քարարծիվը վանդակի ճաղերի արանքից նայում երկնքին: Հենց այդ հայացքը նկատելիս հասկացա, որ իրականում ներսումս իրարամերժ զգացողություններ են. մի կողմից «կենդանաբանական այգի» ինստիտուտի՝ որպես կենդանիների ուսումնասիրության ու պահպանման կենտրոնի, գործունեության արժեքավորման ձգտումն էր, մյուս կողմից՝ կենդանիների ազատության սահմանափակման խնդրի վերլուծություն-քննադատությունը, մի խնդիր, որը արդի

աշխարհում վերածվել էր լուրջ մտահոգության: Ըստ էության՝ հոդվածս ներառելու էր և՛ օբյեկտիվ գնահատումներ, և՛ որոշակի լուրջ քննադատություն, քանի որ ներսումս արդեն կային կուտակումներ՝ կապված աշխարհի որոշ կենդանաբանական այգիների գործունեության հետ: Կրակի վրա կարծես յուղ լցրեց 2014 թվականի փետրվարի 9-ին Կոպենհագենի (Դանիա) կենդանաբանական այգում Մարիուս անունով ընձուղտի դաժան սպանությունը: Այգու այցելուները ականատես էին եղել դաժան մի իրողության. կենդանաբանական այգու աշխատակիցները, չնայած հազարավոր մարդկանց բողոքին և խնդրագրին, սպանել էին Մարիուս անունով ընձուղտին ու նրան առյուծների և վագրերի կեր դարձրել: Հազարավոր մարդիկ հանդես էին եկել ի պաշտպանություն մեկուկես տարեկան ընձուղտի: Պաշտպանության ստորագրություններ էին հավաքվում միանգամից մի քանի կայքերում՝ «Facebook»-ի «Save Marius» էջում, «Skrivunder.net» և «Thepetitionsite.com» կայքերում: Կոպենհագենի կենդանաբանական այգու ղեկավարությունը մտադրվել էր սպանել կենդանուն՝ պատճառաբանելով, թե այդպիսով կխուսափեն ինբրիդինգից՝ մեկ պոպուլյացիայի ներսում զուգավորումից: Այգու ղեկավարությունը նշել էր, որ թեև չի ցանկանում ընձուղտի մահը, բայց ոչինչ չի կարող անել. կենդանու սպանությունը նախատեսված էր Կենդանաբանական այգիների և ակվարիումների եվրոպական ասոցիացիայի կանոններով, որի անդամ է նաև տվյալ հաստատությունը: Բանն այն է, որ այդ ասոցիացիայի մոտ 300 եվրոպական կենդանաբանական այգիներից ոչ մեկում չկար ընձուղտ, որը գենետիկորեն չէր խաչվում Մարիուսի հետ:

Կենդանու կրտումը, ինչպես բացատրում էր կենդանաբանական այգու ղեկավարությունը, կունենար «անցանկալի հետևանքներ», իսկ նրան ազատ բաց թողնել նույնպես չէր կարելի. հայտնի չէ, կենդանի կմնար նա, թե ոչ: Բացի այդ, դրա համար աֆրիկյան երկրներից թույլտվություն ստանալ հեշտ չէր լինի:

BBC-ի եթերում Մարիուսի մասին ռեպորտաժի հայտնվելուց հետո Յորքշայրի կենդանաբանական այգին կենդանուն ընդունելու պատրաստակամություն էր հայտնել: Կենդանու հանդեպ հետաքրքրություն է ցուցաբերել նաև Շվեդիայի կենդանաբանական այգիներից մեկը: Կենդանուն փրկելու իր պատրաստակամությունն էր հայտնել նաև Չեչնիայի նախագահ Ռամզան Կադիրովը:

Այս պատմության ամենազարհուրելի պահը կենդանու սպանությունն է, որը վերածվել էր «արյունալի շոուի»: Թե՛ սպանությունը, թե՛ նրա ընթացքն առաջացրել էին հազարավոր մարդկանց զայրույթը: Ընձուղտին բառի բուն իմաստով մորթել էին, և այդ դաժան տեսարանի ականատեսն էին եղել նաև այդ ժամանակ իրենց ծնողների հետ այգի այցելած փոքրիկ երեխաները: Ընդ որում, նրանցից շատերը զարմանալի սառնասրտությամբ և հետաքրքրությամբ տեսագրել էին գործընթացը:

Կենդանուն այդ կերպ ցուցադրաբար մորթելու՝ այգու բացատրությունը ուղղակի անհեթեթ էր. իբր երեխաները տեսնեն ու իմանան, թե ինչից է կազմված ընձուղտը: Մինչդեռ ամբողջ այդ տեսարանը հիշեցնում էր ծաղր բնության հանդեպ, և պարունակում էր սադիզմի ու դաժանության քարոզչություն:

Ի՞նչ պիտի սովորեին այդ երեխաները: Չէ՞ որ նրանց առջև սպանեցին ու մորթեցին կենդանի արարածի: Այն միտքը, որ մարդը կարող էր այսչափ դաժան ու սառնասիրտ լինել, պարզապես սարսափելի էր[7]:

Առողջ ընձուղտին սպանելուց հետո, շարունակելով զարմացնել ու զայրացնել միջազգային հանրությանը, 2014 թ. մարտի 26-ին Կոպենհագենի կենդանաբանական այգում իրականացվեց հերթական անտրամաբանական սպանդը: Այս անգամ այգու աշխատակիցները քնեցնելով սպանել էին չորս առյուծների: Այգին հայտնել էր, որ ստիպված է եղել «էվթանազիայի ենթարկել» երկու տասը ամսական ձագերի և նրանց տարեց ծնողներին՝ առաջ քաշելով մի քանի պատճառաբանություն. 1) առյուծների ազատավանդակում մտադիր են եղել տեղավորել երիտասարդ արու առյուծի, իսկ վերջինս, միևնույն է, կսպաներ բոլորին, հատկապես՝ ձագերին, 2) չէր կարելի թույլ տալ, որ նորեկ երիտասարդ արուն զուգավորվեր ծեր էգի հետ, քանի որ էգի մոտ առաջ կգային ծննդաբերության և ձագերի խնամքի հետ կապված խնդիրներ, 3) երիտասարդ արուն չէր ընդունվի առյուծների փրայդի կողմից, քանի որ ծեր արուն շարունակում էր մնալ փրայդի անդամ և կսպաներ նորեկին, 4) երիտասարդ արուն չէր ընդունվի առյուծների փրայդի կողմից, քանի որ ծեր էգը շարունակում էր մնալ փրայդի անդամ և նույնպես հնարավոր է, որ սպաներ նորեկին, 5) 16 տարեկան արու և 14 տարեկան էգ առյուծների բնական մահն արդեն մոտ էր, իսկ

[7] Տես՝ «Դանիայում հազարավոր մարդիկ պահանջում են չսպանել ընձուղտին» (http://www.tert.am/am/news/2014/02/09/denmark-giraffe/), «Կիրակի օրվա սպանության մասին | Об убийстве в воскресенье | About the murder on Sunday» (http://arlenshah.wordpress.com/2014/02/10/about-the-murder-on-sunday/):

ձագերը ի վիճակի չէին հոգ տանել իրենց համար, 6) այգում տեղ չէր գտնվել չորս առյուծների տեղափոխման համար, 7) այգին խնդրել էր մյուս կենդանաբանական այգիներին վերցնել 10 ամսական ձագերին, սակայն որևէ առաջարկ չի ստացվել, 8) կարևոր է, որ նորեկ արուն արագորեն տեղափոխվեր ազատավանդակ ու ինտեգրվեր ընտանիք, այլապես վտանգ կար, որ էգերը կմիավորվեին ընդդեմ նորեկի ու կսպանեին նրան, 9) հավանականություն կար, որ ծեր արուն կզուգավորվեր իր էգ ձագերի հետ[8]:

Նախադեպը չունեցող հենց այդ բարբարոսություններն էին, որ մտահոգություններս ու անհանգստությունս խտացնելու պատճառ դարձան, հենց այդ դեպքերն էին, որ հոդվածը շարադրելիս ստիպեցին ինձ կենդանաբանական

---

[8] Տես «Why Copenhagen Zoo made a change in the lion pride» (http://www.zoo.dk/BesogZoo/Nyhedsarkiv/2014/Marts/Why%20Copenhagen%20Zoo%20made%20a%20change%20in%20the%20lion%20pride.aspx), «Tiertötungen im Kopenhagener Zoo: Der Mensch als König der Löwen» (http://www.spiegel.de/kultur/gesellschaft/kopenhagen-zoo-toetet-loewen-und-giraffe-marius-a-960846.html), «Zoo Kills Again: First Marius The Giraffe - Now A Lion Family» (https://www.thedodo.com/copenhagen-zoo-kills-lions-and-482563602.html), «Stop the Killing COPENHAGEN ZOO!!!!» (http://greatcatsoftheworld.wordpress.com/2014/03/27/stop-the-killing-copenhagen-zoo/), «After giraffe uproar, Copenhagen zoo kills 4 lions» (http://www.washingtonpost.com/world/europe/after-giraffe-uproar-copenhagen-zoo-kills-4-lions/2014/03/25/8d2b224e-b442-11e3-bab2-b9602293021d_story.html), «Copenhagen Zoo kills four lions to make room for new generation» (http://english.eastday.com/e/140326/u1a7999536.html), «Copenhagen Zoo defends more killing» (http://edition.cnn.com/video/data/2.0/video/world/2014/03/26/idesk-mclaughlin-danish-zoo-culls-lions-cubs.cnn.html), «Tell Copenhagen Zoo to stop killing healthy animals!!» (http://www.thepetitionsite.com/684/789/994/tell-copenhagen-zoo-to-stop-killing-healthy-animals/), «Copenhagen Zoo Kills 4 Lions» (http://www.thepetitionsite.com/581/096/720/copenhagen-zoo-kills-4-lions/?cid=FB_TA F), «Դանիական կենդանաբանական այգում Մարիուս անունով ընձուղտից հետո քնեցրել են նաեւ 4 առյուծների» (http://news.am/arm/news/200843.html), «Դանիայի կենդանաբանական այգին սպանել է առյուծների ընտանիքին» (http://www.pastinfo.am/hy/node/36725), «Դանիայի կենդանաբանական այգում 10 ամսական կորյունների են սպանել» (http://mamul.am/am/news/48911/դանիայի-կենդանաբանական-այգում-տասն-ամսական-կորյունների-են-սպանել):

այգիների գործունեությանը և առաքելությանը նայել երկու կողմից՝ հաշվի առնելով այն տխուր փաստը, որ աշխարհում որոշ կենդանաբանական այգիներ վերածվել են յուրօրինակ սպանդանոցների, որտեղ միջազգային մասնագիտական ծրագրերի ու պարտավորությունների պահպանման քողի տակ իրականացվում էր բարբարոսություն: Ինչքան գրում էի, այնքան ավելի էի զգում, որ հոդվածս պարունակելու էր լուրջ քննադատություն, սակայն ոչ թե մեր՝ Երևանի կենդանաբանական այգու, այլ առհասարակ կենդաբանական այգի երևույթի հասցեին: Եվ բացի այդ, ինչպես նշեցի, հարցին անդրադառնալու էի երկու դիտակետից՝ փորձելով և՛ գնահատել կենդանաբանական այգիների դերն ու նշանակությունը, և՛ հասկանալ, թե ինչու է երբեմն կենդանաբանական այգիների նկատմամբ ձևավորվում հակասական վերաբերմունք, ինչու է կասկածի տակ դրվում դրանց գոյության անհրաժեշտությունը:

Ես միշտ կարծել եմ և այսօր էլ համոզված եմ, որ վայրի կենդանին պետք է ապրի վայրի բնության մեջ և ոչ երբեք սահմանափակ տարածությունում. լինի դա փակ վանդակ, թե ազատավանդակ: Կապ չունի, թե ինչ տեսակի վայրի կենդանի է՝ բաց տարածությունների փիղ, առյուծ, թե խիտ անտառաթփուտների փոքրիկ եղջերու, միևնույն է՝ նրանք բոլորն էլ երջանիկ են միայն իրենց «հայրենի տանը», բնության գրկում, ազատության մեջ: Որքան էլ հարմարավետ լինեն կենդանաբանական այգիների պայմանները, կենդանիներն այնտեղ դատապարտված են մեկընդմիշտ զրկված լինելու ազատությունից: Մի բան, որի համար մենք ինքներս մշտապես պայքարում ենք: Ավելին. «ազատ ապրելը» կամ «ազատությունը» մենք ամրագրել ենք որպես մարդու հիմնարար իրավունքներից մեկը:

Սակայն մենք խախտում ենք կենդանիների այդ նույն իրավունքը: Չմոռանանք նաև, որ շատ կենդանաբանական այգիներ չունեն տարրական հարմարավետ պայմաններ. կենդանիներն այնտեղ պահվում են անթույլատրելի պայմաններում:

Կենդանու մեկ առանձնյակին պահելով կենդանաբանական այգում՝ մենք նվազեցնում ենք այդ տեսակի ընդհանուր թիվը վայրի բնության մեջ: Մենք մեկընդմիշտ զրկում ենք կենդանուն ազատ ապրելու իր իրավունքից: էլեկտրոնային մամուլում ես հանդիպել էի մի շատ ուշագրավ հոդվածի՝ «Կենդանաբանական այգիները բնության պահապաններ չեն»[9] վերնագրով, որում նշվում էր կենդանաբանական այգիներում կենդանիների կյանքի մասին:

Արդարության համար, սակայն, չեմ կարող չնշել, որ կենդանաբանական այգիները հաճախ կարևոր դեր են ունենում հազվագյուտ և անհետացող կենդանիների պահպանման, նրանց ուսումնասիրման, անգամ՝ բազմացման գործում: Ավելին. կան կենդանաբանական այգիներ, որոնք բազմացնում են հազվագյուտ կենդանիների ու ազատ արձակում նրանց վայրի բնության գիրկը՝ այդպիսով նպաստելով դրանց պոպուլյացիայի վերականգնմանը:

Եվ ուրեմն, ո՞րն է պատասխանը, արդյո՞ք պետք է փակել բոլոր կենդանաբանական այգիները, թե՞ դրանք այնուամենայնիվ պետք են, քանի որ ունեն ինչպես բնապահպանական ու գիտահետազոտական, այնպես էլ բնաճանաչողական նշանակություն: Ի վերջո, չէ՞ որ կենդաբանական այգիների շնորհիվ է միայն, որ քաղաքաբնակ միլիոնավոր մարդիկ կարողանում են մոտիկից

[9] Տես «Zoos Are Not Conservationists» (http://blog.petaasiapacific.com/animals-in-entertainment/zoos-are-not-conservationists):

ծանոթանալ վայրի բնաշխարհի ներկայացուցիչների հետ և հենց կենդանաբանական այգիների միջոցով են կյանքի կոչվում կրթադաստիարակչական ծրագրեր՝ ուղղված մատաղ սերնդի զարգացմանը, բնության նկատմամբ սեր ու հոգածություն սերմանելուն:

Իմ հոդվածի եզրակացությունն այն էր, որ պետք է ոչ թե համատարած փակել կենդանաբանական այգիները, այլ սատարել, որ դրանք զարգանան, որ բարելավվեն դրանցում առկա պայմանները, որ այգիներն ու դրանց բնակիչները ունենան բնականին այնքան մոտ կենսապայմաններ, որ իրենց լավ ու հարմարավետ զգան: Ես հատուկ նշելու էի, որ անհասկանալի դաժանությամբ աչքի ընկած կենդանաբանական այգիների նկատմամբ պետք է կիրառել խիստ պատժամիջոցներ, իսկ բարեխղճորեն գործող այգիները հետևողականորեն դարձնել օրինակ, որ միևնույն է՝ ոչ մի հարմար պայման չի կարող փոխարինել վայրի բնությանը, սակայն եթե կենդանաբանական այգին քաղաքակրթության մի անբաժանելի տարր է և մշակութաբանական առումով՝ մեր կյանքի անքակտելի մաս, ապա պետք է այդ տարրին վերաբերվել քաղաքակիրթ մակարդակով ու պատշաճ գիտակցությամբ:

Շարունակում էի զբոսնել մեր այգում ու մտորել՝ ուրույն ոգևորություն ապրելով, որ ինքս ինձ համար գտել եմ այս խնդրի պարզաբանման ու լուծման «բանալին»:

Քայլելով հասա այգու գիշատիչների բաժնին ու կանգ առա ընձառյուծի վանդակի առջև: Կենդանին չէր երևում, ներսում էր: Սակայն, հավանաբար զգալով իրեն տեսնելու իմ մեծ ցանկությունը, հովազը դուրս եկավ իր «թաքստոցից»: Արևի լույսը անմիջապես ողողեց նրան և ընձառյուծը երևաց իր ամբողջ գեղեցկությամբ: Կամաց,

կարծես ականապատ դաշտում քայլելով, նա քայլ քայլի հետևից առաջացավ: Լույսի տակ նրա գեղեցիկ մորթին փայլում էր, իսկ բծերը ասես միջակետներ լինեին դեղնաշիկավուն մորթու վրա: Ընձառյուծը ուշադիր նայում էր ինձ, կարծես զննում էր: Բնության մեջ չկա մի որևէ այլ հայացք, որ նմանվի այդ հայացքին: Այն այնքան սևեռուն ու խորաթափանց է, որ տպավորություն է ստեղծվում, թե ընձառյուծը ճանաչում է քեզ: Բնությունը մշտապես նայում է մեզ կենդանիների աչքերով: Ես համոզված եմ դրանում: Օրինակ, ուշադրություն դարձրեք, թե ինչպես են փողոցային կենդանիները՝ շները, կատուները, անգամ ճնճղուկներն ու աղավնիները, նայում մեզ, կարծես՝ խոսելով մեզ հետ, երբեմն անգամ օգնություն խնդրելով, քանի որ մենք՝ մարդիկ, հաճախ դաժան ենք վարվում նրանց հետ: Կենդանիների այդպիսի հայացքներ ես նկատել եմ նաև կենդանաբանական այգում: Զբոսնելով կենդանաբանական այգում՝ ուշադրություն դարձրեք, թե ինչպես են վայրի կենդանիները երբեմն նայում ձեզ վանդակի ներսից: Չկա ավելի հրաշալի պահ, քան այդ զարմանահրաշ պահը, երբ մարդն ու գազանը նայում են միմյանց, զննում են իրար: Դա կարծես երկխոսություն լինի, լուռ բացառիկ մի երկ-խոսություն մարդու և բնության միջև: Համոզված եմ, որ մարդն իր կյանքը պետք է ապրի այնպես ազնիվ, որ չա-մաչի կամ չթեքի հայացքը, երբ կենդանին նայում է իրեն, ավելի ճիշտ՝ երբ բնությունն է նայում իրեն կենդանու աչքերով:

Ընձառյուծի հայացքում այնքան իմաստնություն կար, այնքան խոհեմություն ու խոնարհություն, որ ակա-մայից նույն խոնարհությամբ էիր լցվում բնության այդ չքնաղ «ստեղծագործության» նկատմամբ: Ընձառյուծի տեսքը

միայն բավարար է Մայր բնության անեզր երևակայությամբ լեցուն ստեղծարար արարչագործությամբ հիանալու համար: Ես երկար նայում էի ընձառյուծին՝ հիանալով նրա քայլքով, մարմնի նրբագեղությամբ: Մի քանի րոպե անց, կարծես կորցնելով իր հետաքրքրությունը իմ նկատմամբ, ընձառյուծը հանդարտ հետ գնաց դեպի վանդակի ներսը: Ես չգիտեի, որ այդ օրը ընձառյուծի հետ հերթական հանդիպումը և առհասարակ՝ ընձառյուծի թեման բեկումնային նշանակություն կունենար իմ կյանքում…

Մեր երկրի հարավում, մեծահարուստ մի մարդու առանձնատան տարածքում այգու պահակներից մեկը գիշերով մոտեցել էր տան այգում վանդակների մեջ պահվող կենդանիներից մեկին…

– Ինչա՞, հը՞, լավա՞, ես քու…, – ձեռքը վերցնելով փայտն ու վանդակից ներս կենդանուն հարվածելով ասում էր սեփական գերակայության ներքին զգացումով լցված այդ ճիվաղը, – հը՞, սոված ե՞ս, դե ա՛ռ, կե՛ր…

Փայտով հարվածելով կենդանուն՝ մարդը նրան ցավ էր պատճառում, իսկ կենդանին էլ հետզհետե գազազում էր ու հարձակվելու սպառնալիքով առաջ էր գալիս ու խփվում վանդակաճաղերին: Գիշեր էր, մութը պարուրել էր շուրջը և մթության այդ լռության մեջ լսվում էին միայն կենդանուն ուղղված մարդու հայհոյանքներն ու կենդանու ձայնը: Մարդը, օգտվելով կենդանու՝ վանդակի մեջ փակված լինելու հանգամանքից, շարունակում էր ծեծել նրան ու ծաղրել: Կենդանին մի պահ գամվեց վանդակի պատին՝ փորձելով խուսափել հերթական հարվածից: Մարդը, զգալով որ ուզածի չափ վախեցրել է կենդանուն, ավելի առաջ եկավ և փորձեց նորից խփել նրան: Ինչ հաճույք էր դա պատճառում

նրան՝ դժվար է ասել, սակայն կան մարդիկ, որոնց բավականություն է պատճառում անօգնական կենդանուն ստորացնելը, նեղացնելը, վնասելը, կան այդպիսի երկոտանի «հիվանդներ»…

Իրավիճակը թեժանում էր, այդ մարդը փորձում էր ավելի մոտենալ գազանին՝ մեկ անգամ ավելի նրան խփելու համար…

…Այդ օրը ինձ համար սովորականի նման երեկոյան տանը նստած հեռուստացույց էի դիտում, երբ լուրերով հաղորդեցին, որ երկրի հարավում մեծահարուստներից մեկի տանից փախել է խոշոր կատվազգի: Ամենաառաջին միտքը, որը այդ պահին ծագեց ուղեղումս, հետևյալն էր. «Դարձյալ վանդակ, դարձյալ կենդանի՝ անազատության մեջ, վանդակի մեջ, լարված ու ճնշված, դարձյալ կենդանիներին մարդկանց կողմից վանդակում պահելու խնդիր…»: Սկզբում այդ լուրն ինձ զարմանալի թվաց, քանի որ նման դեպքերում կփորձեին կոծկել այն՝ տվյալ մեծահարուստի անունը չշրջանառելու համար: Սակայն, որքան հասկացա, լուրը հավաստի էր, քանի որ հարցազրույց կար նաև մարզպետի հետ: Կասկածներս փարատվեցին, երբ տեսանյութից հայտնի դարձավ, որ կենդանին նախքան փախուստը լրջորեն վնասել է իր «խնամողին», որն այդ ժամանակ գտնվում էր հիվանդանոցի վերակենդանացման բաժնում: Ես անմիջապես կապվեցի լրագրողական շրջանակի իմ ընկերների հետ՝ փորձելով ճշտել նյութն ու հնարավորինս շատ տեղեկույթ ստանալ: Պարզվեց, որ դա ոչ թե խնամողն է եղել, այլ հարուստի տան պահակներից մեկը, որը մոտեցել ու նեղացրել է անազատության մեջ գտնվող լարված կենդանուն՝ փորձելով «գժվեցնել» նրան ու հարվածել փայտով: Այդպիսի դեպքեր էլի են գրանցվել,

երբ, ասենք, մասնավոր փոքր կենդանաբանական այգու կերակրողը փորձել է ոտքով հարվածել կամ որևէ բան նետել վանդակի մեջ գտնվող գիշատչի վրա, ու վերջինս ճանկել է նրա ձեռքը կամ ոտքը[10]: Իմ ընկերները ինձ տեղեկացրեցին նաև, որ մեծահարուստի տանը փորձել են ամեն կերպ թաքցնել այս դեպքը, սակայն երբ տեսել, են, որ վիրավորի վիճակը իսկապես շատ ծանր է, ստիպված են եղել պարզաբանումներ տալ. այդպիսի վնասվածքներով որևէ հիվանդ երբևէ չէր գրանցվել հիվանդանոցում, և բնական է, որ դա միանգամից նկատվել էր բժիշկների, ոստիկանների կողմից: Ինձ ասացին նաև, որ ընթանում էին որոնողական աշխատանքներ, և որ տեղի բնակչությանը զգուշացվել է լինել աչալուրջ: Չէր հաղորդվում միայն, թե խոսքը որ գիշատչի մասին է: Ես առաջին հերթին մտածեցի, որ հավանաբար առյուծ է, վագր կամ գորշ արջ, քանի որ մեր երկրում իսկապես կան հատկապես այդպիսի խոշոր կենդանիներ պահելու հնարավորություն ունեցող մարդիկ: Սակայն, որքան հասկացա, խոսքը առյուծի, վագրի կամ արջի մասին չէր, քանի որ տվյալ կենդանիների վերաբերյալ բերվեցին տվյալներ, որ որևէ անօրինական գնում կամ ներմուծում չի եղել: Երկրորդ տեղում գորշ գայլն էր կամ էլ լուսանը, թեպետ չէի կարծում, որ նրանք այդպես խորը վնասվածքների հեղինակներ կարող էին լինել, մանավանդ, որ տուժողը բավական խոշորամարմին էր, և գայլը, առավել ևս՝ լուսանը, դժվար թե այդպես վնասեր: Իմ մտքով անգամ չէր անցնում, որ խոսքը նրանց մասին չէ, այլ… Գործի դնելով իմ բոլոր կապերը, խորհրդակցելով նաև իմ բնապահպան ընկերների հետ, ես որոշեցի մեկնել դեպքի վայր ու տեղում ճշտել ամեն ինչ, առավել ևս, որ հրաշալի ու

[10] Տես *Առլեն Շահվերդյան,* Ապրելու իրավունք: Երևան, 2011, էջ 281:

բացառիկ նյութ ձեռք բերելու հնարավորություն կար: Անհապաղ պատրաստվեցի և, հաշված ժամերի ընթացքում ես ոչ միայն պատրաստ էի ճանապարհ ընկնելու, այլև հեռախոսազանգերի միջոցով արդեն ձեռք բերեցի նախնական պայմանավորվածություններ համապատասխան մարմինների հետ, այդ թվում նաև հոգացել էի իմ կեցության տեղի ու պայմանների մասին:

Ճանապարհ ընկանք. ինձ հետ էր բնապահպանական կառույցներից մեկի ներկայացուցիչ իմ լավ բարեկամը, որը վերցրել էր նկարահանման սարքավորումներ: Մեքենայով մի քանի ժամվա ճանապարհ էր «Շիկահող» արգելոցի և «Արևիկ» ազգային պարկի հատման տարածքից դեպի հարավ: Կենդանու փախուստից հետո վերջին անգամ նրան այդ կողմերում էին տեսել, այն էլ՝ գիշերը: Ավելի ճիշտ՝ նկատել էին ինչ-որ գազանի, բայց թե ինչ՝ դեռ հայտնի չէր: Ես ճանապարհին դարձյալ փորձում էի պարզել գազանի ինքնությունը՝ գործի դնելով բոլոր հնարավոր աղբյուրները, սակայն՝ ապարդյուն: Որոշեցի հենց տեղում պարզել, առավել ևս, որ դեպքն արդեն ստացել էր հանրային հնչողություն: Մեզ մտահոգում էր այն, որ հանկարծ որսագողերը կամ որսորդները մեզանից շուտ չգտնեն նրան, և որ մենք գոնե կարողանանք նկարահանել կամ առնվազն լուսանկարել նրան: Բնականաբար, մենք նախատեսել էինք, որ միգուցե մի քանի օր մնայինք այնտեղ:

Հասնելով ու տեղավորվելով՝ անմիջապես հանդիպեցինք տեղական իշխանությունների հետ: Նրանց տրամադրած տեղեկույթը շատ կցկտուր էր. իրենք էլ ճշգրիտ չգիտեին, թե ինչ է փախել՝ լուսան, թե՞ մեկ այլ կենդանի: Ես զգացի, սակայն, որ միգուցե գիտեին, սակայն փորձում էին կոծկել՝ վախենալով հաշվեհարդարից: Դե, իսկ

նրա բնակության վայրն այնպես էր պահպանվում, որ ոչ մի կերպ չկարողացանք հանդիպել նրան կամ նրա շրջապատից որևէ մեկի հետ: Մեզ չօգնեց անգամ լրագրողի վկայականը. նման տեղերում հանրային իրազեկման ու նման այլ պահանջների պահպանման հարցադրումների վրա թքած ունեն: Դե, մենք էլ որոշեցինք, որ հաջորդ օրը անմիջապես շարժվենք դեպի այն թավուտը, որտեղ վերջին անգամ տեսել են կենդանուն, ու հենց այդտեղից էլ սկսենք մեր որոնումները: Հաջորդ առավոտյան, զինված բոլոր սարքավորումներով, ուղղվեցինք դեպի թավուտ: Թե ինչպես էր այդ կենդանին, դուրս գալով վանդակից, փախել հարուստի՝ շքեղ ու մեծ դղյակ հիշեցնող առանձնատան տարածքից, մի քիչ պարզ չէր, քանի որ այն պատված էր բարձր պարիսպով ու այնքան «անառիկ» էր, որ շատ դժվար էր դա պատկերացնելը: Կարելի էր ենթադրել, որ շատ ճարպիկ կենդանի է եղել:

Որոնումներն սկսեցինք՝ մտնելով խիտ թավուտ և ապա՝ շարժվելով դեպի մոտակա լեռնալանջը: Արդեն կեսօր էր, ու անտառի ձայներն ստեղծել էին մի համընդհանուր սիմֆոնիա, որը ականջ էր շոյում: Մի կողմից, անտառային երգեցիկ թռչունների ձայներ էին, որոնք կարծես զարդարում էին անտառում իշխող ընդհանուր նվագը, մյուս կողմից՝ ծառերի սաղարթի խշշյունը, որը մեղմացնում էր ընդհանուր ձայնը: Փչում էր մեղմ քամի, ու «որոնողական աշխատանքը» աննկատ կերպով վերածվեց հաճելի մի արշավի: Մենք երկուսով էինք ու որքան էլ որ աշխատում էինք լուռ լինել՝ փորձելով որսալ ամեն մի ձայնը, միևնույն է կամաց զրուցում էինք, կարծիքներ ու մտքեր փոխանակում, փորձում որոշել հաջորդ քայլը: Արդեն բավականին անցել էինք, երբ ընկերս ասաց, որ ուզում է մի քիչ նստել և

հանգստանալ: Ես առաջարկեցի մի կտոր բան ուտել և, մինչև ինքը պայուսակից կհաներ սննդամթերքը, որոշեցի մի քիչ քայլել: Ծառերով շրջապատված մի բացատում էինք, որտեղ մեծ քարեր էին: Բացատի եզրին հողաշերտի մի փոքր հատված զուրկ էր խոտածածկից ու այդտեղից վեր էր խոյանում քարաժայռային մի հսկա զանգված: Ակնհայտ էր, որ կեռ հիշեցնող այդ զանգվածից այն կողմ էլի անտառ է, այն էլ՝ խիտ անտառ: Ընկերս նստեց մի քարի վրա, ես իրենից մի քանի մետր հեռավորության վրա քայլում էի ու հետևում այս ու այն կողմ թռչող թիթեռնիկներին: Հունիս ամիսն էր, ու արևը հաճելի ջերմություն էր սփռում, միջատ-ներն էլ ակտիվացել էին ու իրենց բազմերանգությամբ հարստացրել բնության ներկապնակը: Շուրջս կանաչ «հետնաֆոն» էր, որի վրա ասես վրձնած լինեին գույնզգույն թիթեռնիկները, բզեզները: Քարերի արանքում մի փոքրիկ մողես արագ սողաց ու էլի մտավ քարերի տակ: Ես փորձեցի հայացքով հետևել նրան և առաջ եկա, որ տեսնեմ թե արդյո՞ք երևում է նա քարի տակից: Այդ վայրկյանին միանգամից աչքիս զարնեց թաթի հետք: Կանգ առա ու քարացա տեղում, քանի որ դա գայլի կամ լուսանի հետք չէր, դա հովազի հետք էր, ընձառյուծի հետք, որը շատ լավ էի ճանաչում: Զգացվում էր, որ խոշոր արու է: Անմիջապես ձայն տվեցի ընկերոջս, որն ապշեց՝ տեսնելով հետքը: Ընձառյուծի աջ թաթի հետքն այնքան պարզորոշ էր, որ հնարավոր չէր չնկատել: Խոշոր հասուն արու էր, և այդ կողմերով էլ նոր էր անցել: Մի հետք էր, որովհետև մյուս թաթի հետքը խոտերի մեջ էր և չէր նկատվում, մինչդեռ աջ թաթը դրել էր հողի շերտի վրա: Դրանից հետո հետքերը անհետանում էին, քանի որ ամենայն հավանականությամբ նա ցատկել էր քարաժայռերի ուղղությամբ ու բարձրացել

վեր, դեպի ժայռի մյուս կողմում գտնվող անտառի հատ-վածը: Այն, որ մոտերքում ընձառյուծ կա, մեզ արդեն զգաստացրեց, թեև վստահ էինք, որ կենդանին ինքն էլ վախեցած կլինի: Ուղղակի մի բան է մարդուց մշտապես խոսափող վայրի ընձառյուծը, մեկ այլ բան է մարդու «միջավայրում» վանդակի մեջ ապրած ու մարդու կողմից կեղեքված գիշատիչը, որն արդեն հասցրել է «նեղանալ» մարդուց ու հնարավոր հանդիպման դեպքում կարող էր վնասել, ոչ թե պարզապես խուսափել հանդիպումից: Հնարավոր էր նաև, որ կենդանին վիրավոր էր, այդ մասին լուր չկար: Իսկ եթե նա վիրավոր էր, ապա ավելի կատաղած ու վտանգավոր էր և իրեն պաշտպանելու հա-մար հաստատ կհարձակվեր:

Արդեն երեկո էր, որոշեցինք հետ վերադառնալ: Տեսախցիկը տեղադրել չստացվեց, քանի որ շուտով մութն ընկնելու էր: Որոշեցինք դա անել հաջորդ օրը, մանավանդ որ արդեն կար մոտավոր տեղը, թե որտեղ պետք է այն տեղադրել: Ներքուստ շատ լարված էինք. կենդանին կարող էր լինել ցանկացած անկյունում, դարանակալած լիներ բարձր թփերի մեջ կամ քարաժայռի մոտ, այնպես որ՝ հնարավոր հանդիպման սպասում էինք ամեն վայրկյան:

Հետաքրքիր զգացողություն է, երբ որոնում ես գիշա-տիչ գազանի, այն էլ՝ ճկուն, խորամանկ, ճարպիկ ընձառ-յուծի, որը մանևրելու, էլ չեմ ասում՝ քողարկվելու վարպետ է: Բծավոր մորթին նրան համարյա անտեսանելի է դարձնում լանդշաֆտի գունավորման մեջ, և հնարավոր է՝ կենդանին լինի կողքիդ և դու չնկատես նրան: Դա կարծես բնության արարչագործության հրաշքներից մեկը լինի, երբ կենդանին իր գունավորմամբ այնպես է քողարկվում, որ նրան նկատում ես մեծ դժվարությամբ:

Վերադարձանք և անհամբերությամբ սպասում էինք հաջորդ օրվան: Երևի դա էր պատճառը, որ գրեթե չքնեցինք:

Գիշերը անհանգիստ էի, ուղեղումս բազում մտքեր էին, չէի կարողանում «անջատվել» ու քնել: Վեր կացա, վառեցի գիշերալամպը, պայուսակիցս հանեցի «Ապրելու իրավունք» գիրքս[11], որում ընձառյուծի հետ հանդիպման մի հետաքրքիր նկարագրություն կար, և սկսեցի վերընթերցել այն. «Ճանապարհին պատահաբար նկատեցինք մի շքեղ արու ընձառյուծի, որ հանգստանում էր հաստաբուն ծառի ճյուղին: Մեր ուղեկցորդը՝ Սիդնեյը կանգնեցրեց մեքենան. ընձառյուծների նկատմամբ նա մի առանձնակի սեր ուներ ու ուզում էր, որ հիանանք նրանցով: Մեզ համար շատ անսպասելի՝ Սիդնեյը թույլ տվեց, որ դուրս գանք մեքենայից ու մի քիչ մոտենանք ծառին, որպեսզի ավելի մոտիկից նայենք ընձառյուծին: Սիդնեյը գիտեր, թե մինչև ուր կարող էինք քայլելով մոտենալ: Այնպես որ, մեզ վտանգ չէր սպառնում: Վտանգ ու անհանգստություն չէր սպառնում նաև ընձառյուծին. մենք ապահով հեռավորության վրա էինք, ու նա շարունակում էր հանգիստ նստած մնալ ճյուղին: Երբ իջանք ու մի քանի քայլ արեցինք դեպի վայրի գազանը, ես մի հետաքրքիր զգացողություն ունեցա: Բացի հիացմունքից ու ոգևորությունից, ես զգացի նաև, թե ինչքան փոքր ենք մենք կուսական բնության գրկում: Մենք կանգնել

[11] Տես *Առլեն Շահվերդյան,* Ապրելու իրավունք: Երևան, 2011, 308 էջ, *նաև՝* «Ամենաընթերցվողը / Most Read» (http://arlenshah.wordpress.com/arlen-shahverdyan-right-to-live-book/), «Իմ գիրքը՝ Կոնգրեսի գրադարանում / My Book in Congress Library» (http://arlenshah.wordpress.com/2012/08/30/arlen-shahverdyan-book-right-to-live-in-congress-library/), ««Ապրելու իրավունք» գիրքն այժմ հասանելի է բոլորին / The book “Right to Live” is now available to all» (http://arlenshah.wordpress.com/2013/06/30/arlen-shahverdyan-the-book-right-to-live-is-now-available-to-all/):

ու նայում էինք ընձառյուծին… Այդ պահին ես մտածում էի, թե ինչ հրաշալի է բնությունը, երբ նրան ձեռք չեն տալիս ու չեն վնասում, մենք էլ մեկն ենք բնության մյուս բոլոր արարածներից: Հետո՞ ինչ, որ բանականություն ունենք, չէ՞ որ շարունակում ենք ապրել էլի նույն մոլորակի վրա, որի վրա նրանք էլ են ապրում՝ ընձառյուծն էլ, առյուծն էլ, մողեսն էլ, օձն էլ, ծառերն էլ, բոլորը: Եվ այդ պահին զգում ես, թե ինչքան մեծ են նրանք, ավելի երկար պատմություն ունեն, գոյություն են ունեցել մարդուց շատ առաջ ու եկել-հասել են մեր օրերը: Ու հիմա մենք իջել էինք մեքենայից ու հիացած հայացքով դիտում էինք այդ տեսարանը, կուսական բնության այդ անկյունը, որտեղ հաստաբուն ծառն արդեն քանի հարյուրամյակ կանգուն էր, և ընձառյուծը հանգստանում էր անխռով ու անվրդով: Հրաշալի, անկրկնելի պահ էր, որը հավերժ մնաց իմ հոգում որպես բնության հետ ներդաշնակության, նրա պարգևած խաղաղության ու երջանկության վկայություն»[12]:

Գիրքս վերընթերցելու նպատակը մեկն էր՝ կրկին մի պահ տեղափոխվել դեպի կուսական բնության գիրկը, մտովի վերադառնալ այն արահետները, որտեղով միգուցե անցել էր ընձառյուծը, նկատել այն, ինչը հնարավոր չէր եղել նկատել առաջին արշավի ժամանակ, որոնել ընձառյուծին թարմ հետքերով՝ փորձելով հասկանալ նրան, կռահել, թե ուր կգնար, ինչպես կվարվեր: Ես ուզում էի՝ որքան հնարավոր է շատ բան իմանալ ընձառյուծի մասին նախքան վայրի բնության գրկում նրան հանդիպելը: Կատվազգիների ընտանիքի այս առանձնահատուկ ներկայացուցիչներից

[12] *Ա. Շահվերդյան*, Ապրելու իրավունք, Երևան, 2011, էջ 185:

մեկի՝ ընձառյուծի (լատ.՝ Panthera pardus)[13] թեմային ես բազմիցս էի անդրադարձել «Ապրելու իրավունք» գրքում, սակայն ընձառյուծն այնքան հետաքրքիր կենդանի է, որ ամեն անգամ նրա մասին կարդում էի մեծ հետաքրքրությամբ: Որքան ավելի մոտիկից ես ճանաչում վայրի կենդանուն, այնքան ավելի ես գնահատում նրան, սիրում ու ձգտում պահպանել:

Պետք է ասեմ, որ ընձառյուծը շատ յուրահատուկ կենդանի է: Կատվազգիների ընտանիքի ոչ մի խոշոր կատու չունի, օրինակ, ընձառյուծի ճարպկությունը, քանի որ այս կենդանին ծառ մագլցելու հմուտ ու անգերազանցելի վարպետ է: Ավելին. նա ի զորու է իրենից երկու անգամ ծանր ավարը բարձրացնել ծառը և հանգիստ ճաշակել այն: Սակայն սրանք միակ առանձնահատկությունները չեն, որոնցով աչքի է ընկնում այս բարեկազմ գազանը: Նա անչափ գեղեցիկ է իր յուրահատուկ մորթով և, բացի այդ, շատ ունիվերսալ, արագ հարմարվող կատու է, քանի որ բոլոր խոշոր կատուներից միայն ընձառյուծն ունի աշխարհագրական մեծ տարածվածություն. նա ամենատարածված վայրի կատվազգին է: Ըստ էության՝ ընձառյուծի արեալը ընդգրկում է միանգամից երեք մայրցամաք՝ Արևելյան Եվրոպա (պայմանականորեն պետք է հասկանալ ավելի կոնկրետ՝ Թուրքիան, Հարավային Կովկասը), Առաջավոր, Արևելյան և Հարավարևելյան Ասիա և Աֆրիկա: Եթե ավելի մանրամասնելու լինեմ, ապա մինչև վերջերս ընձառյուծը բնակվում էր արևելյան և կենտրոնական Աֆրիկայում, որոշ խմբեր կային մերձսահարյան Աֆրիկա-

[13] Տես «Panthera pardus» (http://www.iucnredlist.org/details/15954/0), «Վայրի բնություն. ընձառյուծ» (http://arlenshah.wordpress.com/2012/02/05/wildlife-leopard/):

յում, Հնդկաստանում, Ինդոնեզիայում (հատկապես՝ Ճավա, Սումատրա կղզիներում), Արաբական թերակղզում, Ռուսաստանում (ավելի ստույգ՝ Կովկասի հյուսիսում), Կորեայում, Չինաստանում, Կովկասում, Թուրքմենստանում, Իրանում, Հարավային Կովկասում, Հնդկաչին թերակղզում, Ցեյլոն և Շրի Լանկա կղզիներում: Այսօր այս արեալը շատ ավելի է կրճատվել, սեղմվել են դրա սահմանները, և շատ երկրներում ընձառյուծը, ցավոք, այլևս չի հանդիպում կամ հանդիպում է խիստ փոքր, կասեի՝ խորհրդանշական թվաքանակով: Ընձառյուծները վաղուց անհետացել են նաև մայրցամաքային Եվրոպայում (այն դեպքում, երբ Չորրորդական ժամանակաշրջանում ընձառյուծները տարածված էին Եվրոպայով մեկ՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Անգլիայի, Գերմանիայի, Բելգիայի, Իսպանիայի, Պորտուգալիայի, Շվեյցարիայի, Հունգարիայի, Ռումինիայի տարածքներում): Սակայն եթե Եվրոպան որպես աշխարհամաս ընկալենք ոչ թե իր բուն մայրցամաքային տարածքով, այլ ավելի ընդլայնված սահմաններով (ներառյալ՝ Կովկասը և Թուրքիան), ապա պետք է նշել, որ, այո, ընձառյուծը այսօր էլ Եվրոպայի ամենախոշոր կատվազգին է և խոշոր գիշատիչ կաթնասուններից մեկը՝ գորշ արջի, գայլի, լուսանի հետ միասին:

Նրանք, ովքեր ընձառյուծ տեսել են միայն հեռուստացույցով ու լավ չեն պատկերացնում այս կենդանու իրական չափսերը՝ նշեմ, որ ընձառյուծի համաչափ, գեղակազմ մարմնի երկարությունը 107–160 (երբեմն՝ 180) սմ է, պոչինը՝ 75–110 սմ, կենդանի զանգվածը՝ 32–42 կգ, երբեմն՝ մինչև 60 կգ: Էգերն ավելի փոքր են:

Մարմինը ձգված է, մկանոտ, ոտքերը համեմատաբար կարճ են, ամուր, թաթերը՝ լայն ու սուր ճանկերով: Ականջները կարճ են ու կլորավուն:

Ընձառյուծի մորթին շատ գեղեցիկ է: Մեջքը դեղին է կամ դեղնակարմրավուն (երբեմն՝ շիկակարմրավուն)՝ մոխրագույն երանգով, համաչափ ցրված վարդանախշաձև սև բծերով, պտերով: Կան նաև լրիվ կամ գրեթե լրիվ սև մորթով հովազներ, որոնք հանդիպում են հիմնականում Հարավարևելյան Ասիայում, նրանց կոչում են նաև սև հովազ կամ պանտերա: Սև կամ մուգ գունավորման տակ, միևնույն է, նշմարվում են ընձառյուծին բնորոշ բծերը:

Ընձառյուծն ապրում է անտառներում, սարերում: Սնվում է եղջերուներով, այծյամներով, վայրի խոզերով, նապաստակներով, մկնանման կրծողներով, թռչուններով, նաև՝ ձկներով ու լեշերով: Մարդակեր ընձառյուծները հազվադեպ են: Այս ուժեղ և ճարպիկ կենդանին որսի վրա հարձակվում է գաղտագողի՝ դարանակալելով: Ունի սուր տեսողություն, լավ լսողություն, թույլ հոտառություն: Որջը սարքում է քարանձավներում, ժայռաճեղքերում, հաստաբուն ծառերի փչակներում, երբեմն՝ մացառախոզերի հին բներում:

Ընձառյուծն ունենում է 1–4 (երբեմն՝ 6) ձագ, որոնք կաթով կերակրվում են 3 (երբեմն՝ 6–8) ամիս: Ձագերը 5 ամսականում կարող են որսալ մանր կենդանիներ, 1–1,5 տարեկանում՝ ապրել ինքնուրույն: Անազատ պայմաններում ընձառյուծն ապրում է մինչև 20-21 տարի:

Ընձառյուծը որպես տեսակ ունի բազմաթիվ, ավելի ստույգ՝ 27 ենթատեսակներ, որոնք իրարից տարբերվում են աշխարհագրական տարածվածությամբ, մորթու գույնով, դրա բծերի դասավորությամբ և ձևով:

Ընձառյուծների ենթատեսակներից առավել հայտնի են աֆրիկյան, պարսկական կամ առաջավորասիական (կովկասյան), հեռավորարևելյան (ամուրյան), հնդկական, հյուսիս-չինական ընձառյուծները[14]:

Մեր ժողովրդի համար ընձառյուծը ծանոթ ու սիրված կենդանի է: Հայաստանում մարդիկ և ընձառյուծները ապրում են կողք կողքի վաղ Հոլոցենից:

Հայերենում ընձառյուծին անվանում են նաև հովազ, ինձ, հովազառյուծ:

Մինչև 20-րդ դարը ընձառյուծները տարածված էին մեր ամբողջ երկրի տարածքով: Սակայն որսագողության, ապրելավայրերի և որս հանդիսացող տեսակների կրճատման հետևանքով ընձառյուծներն համարյա վերացել էին մեր երկրից:

Ներկայումս, շնորհիվ հզորացված և նոր ստեղծված բնության հատուկ պահպանվող տարածքների երկրի հարավում, որը մեծ մասամբ իրականացվել է WWF-ի աջակցությամբ, ընձառյուծի թվաքանակը վերականգնվում է Հայաստանում և հասնում է մոտ 5-7 առանձնյակի:

Կովկասյան ընձառյուծը մեր բնաշխարհի, մեր բացառիկ կենսաբազմազանության հազվագյուտ գանձերից մեկն է: Այսօր ընձառյուծը գրանցված է Բնության պահպանության միջազգային միության և ՀՀ Կարմիր գրքերում, սակայն կենդանու՝ պահպանության գրքում գրանցված լինելն ու իրական կյանքում նրա պահպանության առկա վիճակը լրիվ տարբեր են: Մեկ անզգույշ կամ չկշռադատված քայլ, և մենք կարող ենք հավետ զրկվել այս բացառիկ գիշատչին մեր բնաշխարհում ունենալու հնարավորությունից: Լավ է, որ բնապահպան պետական կառույցները և

[14] Տես «Panthera pardus» (http://www.iucnredlist.org/details/15954/0):

ոչ պետական կազմակերպությունները մեծ տեղ են հատկացնում կովկասյան ընձառյուծի պահպանության խնդրին[15]: Այս խորհրդավոր, գեղեցիկ ու յուրահատուկ գազանն ունի մարդու հոգածության կարիքը: Թե՛ նա, թե՛ մյուս բոլոր կենդանիները մարդկության ագահության ու անխոհեմության պատճառով այսօր վտանգված են, գտնվում են խիստ խոցելի վիճակում, և ո՞վ, եթե ոչ հենց մարդը, պետք է գործադրի բոլոր ջանքերը՝ նրանց պահպանելու համար:

Երկար ու մանրամասն կարդալով նյութեր ընձառյուծի մասին, որը իմ և, համոզված եմ, շատերի սիրելի կենդանիներից մեկն է, դիտելով այս կենդանու ենթատեսակների լուսանկարները համացանցում՝ ես հասկացա, որ «ընձառյուծ» կոչվող «աշխարհը» անեզր է ու կարելի է անընդհատ «ճանաչել» նրան: Գիտակցում էի, որ գուցե հնարավորություն ունենամ մոտիկից տեսնելու կենդանի ընձառյուծի: Մի բան է նրա մասին կարդալ և ուսումնասիրել նրան գրքերով ու համացանցով, և մեկ այլ բան է՝ տեսնել կենդանի ընձառյուծի վայրի բնության գրկում, նրա բնական կենսամիջավայրում: Տեսնել և այնքան մոտիկից, որ կարծես կարելի է դիպչել նրան: Այդ էր պատճառը, որ ամբողջ գիշեր սպասում էի, թե երբ կբացվի լույսը, երբ մենք նորից կփորձենք մեր բախտը՝ տեսնելու վայրի ընձառյուծ վայրի բնության մեջ:

Վաղ առավոտյան ուղևորվեցինք դեպի այն վայրը, որտեղ ընձառյուծի հետքեր էինք նկատել: Ճանապարհին դարձյալ ուշադիր զննում էինք շուրջը: Գրեթե աննկարագրելի մի զգացողություն ունեինք. երբ հետևում ես վայրի

[15] Այս առումով ուզում եմ հատկապես ընդգծել Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) զգալի ու կարևոր դերակատարումը և շարունակական ջանքերը (տես http://armenia.panda.org/about_wwf/):

գիշատիչ գազանի, ապա մշտապես քեզ հետապնդում է այն միտքը, որ նա էլ քեզ է հետևում: Այնտեղ, թփերի մեջ, ծառի ճյուղից կամ անմիջապես քո մեջքի հետևում, այնտեղ, ուր խաչվում են պատահականությունն ու զուգադիպությունը, վտանգն ու ապահովությունը, ռիսկն ու հաշվենկատությունը, այնտեղ, ուր ամենից քիչն ես սպասում անսպասելիին: Կենդանաբանական այգում օրեր առաջ տեսածս ընձառյուծի աչքերն ուղեկցում էին ինձ ամբողջ ճանապարհին: Նա կարծես ինձ հետ էր. ընձառյուծը կարծես քայլում էր մեզ հետ՝ թաթերը դնելով այն տեղերում, որտեղ ոտնահետք էինք թողել ու զգուշորեն, առանց ավելորդ հետքեր թողնելու, կարծես նա էլ մեզ էր հետապնդում: Անտառի ձայների մեջ դժվար էր տարբերել կամ առանձնացնել ընձառյուծի ներկայությունը վկայող որևէ ձայն, օրինակ՝ նրա մարմնի ու թփերի կամ խոտերի հետ շփումից առաջացած: Դա ավելի էր սրում իրավիճակը: Մյուս կողմից՝ աննկարագրելի հրճվանք էինք ապրում. քայլում էինք ընդառաջ մի հիասքանչ գազանի, որին ամեն վայրկյան կարող էինք հանդիպել: Զինված չէինք, դա լավ չէր, բայց չէինք էլ սպասում, որ հետապնդման օբյեկտը խոշոր կատվազգի էր լինելու:

Երկնքում կապույտի «շերտերը» ասես դարսվել էին իրար վրա, ամպերը կարծես մասնատել ու դասավորել էին երկնքի անհուն կապույտի պատառիկները:

Համեմատաբար ավելի շուտ հասանք տեղ, քանի որ արդեն ծանոթ էինք արահետին, տեղանքին: Ամրացրեցինք տեսախցիկը: Մի քանի ժամ ոչ մի բան չէր նկատվում, ոչ մի շարժում. շուրջը ոչինչ չէր հիշեցնում, որ այդ կողմերում հովազ կար: Նա այնքան անաղմուկ ու զգույշ կենդանի է, որ գրեթե անհնար էր թվում նրան անմիջապես նկատելը, էլ ուր մնաց՝ նկարահանելը: Սակայն բախտը ժպտաց մեզ…

Նստած էին քարերին, արդեն մթնում էր, երկնքում չղջիկներ էին թռչում: Արևի վերջին շողերը հետզհետե անհետանում էին ամպերի հետևում, արևը իջնում էր հորիզոնից, ու շուրջը ամեն ինչ աստիճանաբար ընկղմվում էր մթության մեջ: Չղջիկները ավելի ակտիվացան մութն ընկնելուն պես. նրանք թռչում էին հենց մեր գլխավերևում: Զգացվում էր, որ մոտերքում քարանձավային հատվածներ կան, որոնք տուն են այդ յուրահատուկ կենդանիների համար: Սակայն, քարանձավների, քարաժայռերում հնարավոր որջերի առկայությունը հուշում էր, որ հնարավոր է՝ հովազն էլ է այդ կողմերում ապաստանել: Չէինք հասցրել մինչև վերջ ընկալել մեր իսկ ենթադրությունը, երբ լսվեց տարօրինակ մի շրշյուն: Դա սովորական ձյան չէր, քանի որ շուրջը ամեն բան լռեց մի պահ, և միայն այդ ձայնը լսվեց: Այնպիսի տպավորություն էր, որ շուրջը ոչ մի բան չէր համարձակվում այլևս շարժվել, որպեսզի չգրավի այդ ձայնի «հեղինակի» ուշադրությունը: Մի պահ կարծես լռել էին հեռվում լսվող անտառային ձայները, զգացվում էր, որ ինչ-որ բան կա մոտերքում, և այդ ինչ-որ բանը մոտենում էր մեզ: Մենք քարացանք տեղում, արագ թաքնվեցինք թփերի մեջ՝ փորձելով աչքներս վեց արած տեսնել մի որևէ բան: Լույսը անջատել էինք, որպեսզի կենդանուն չվախեցնեինք, սակայն ինքներս էլ լավ վախեցած էինք ու լարված: Ձայնը կրկնվեց, դա քայլքի ձայն էր, ընդ որում՝ շատ զգուշավոր, քանի որ անընդհատ չէր լսվում, այլ ընդհատումներով, խիստ հաշվենկատ ընդհատումներով: Մի քանի վայրկյան ևս, և մենք զգացինք, թե ինչպես մեր դիմացով, մի քանի մետր հեռավորության վրա անցավ խոշոր հովազը: Մենք շունչներս պահել էինք: Կենդանին այնքան արագ անցավ, որ կարծես տեսիլք լիներ, մթության քողի տակ աչքներիս

առջևով անցած բծավոր մի տեսիլք: Գեղեցիկ, ազդեցիկ ու բծանախշ նրա տեսքը խաղաղ էր ու վստահ, և մենք, մեր տեղում քարացած, մի պահ հիացանք նրանով: Ընձառյուծն անցավ մեր առջևով ու անհետացավ խիտ թփուտներում:

– Գնանք հետևից, – ասեցի ես:

– Գժվել ե՞ս, – ասաց ընկերս, – զինված չենք, ուզում ես էսօր ընթրիքին մեզանից լանգետ համտեսի՞:

– Գնանք նրա հետևից, զգույշ կլինենք, թող մի քիչ էլ հեռանա ու գնանք, – հաստատակամորեն պնդեցի ես:

Առաջին անգամ էր, որ վայրի բնության մեջ այդքան մոտիկից տեսնում էի հովազի, և նրան հետևելու ու նորից տեսնելու գայթակղությունն անդիմադրելի էր:

Մենք դուրս եկանք մեր թաքստոցից ու հնարավորինս անաղմուկ սկսեցինք քայլել հովազի հետևից: Ամբողջ մարմնով լարված էինք, փորձում էինք ձայն չհանել, տեսնել մթության մեջ, թեև գրեթե տեսանելիություն չկար: Արահետը արդեն ծանոթ էր մեզ, ու մենք քայլեցինք առաջ: Շունչներս պահել էինք ու հետզհետե խորանում էինք թավուտում: Առաջանալով հավանաբար մի քսան-երեսուն մետր՝ մենք հայտնվեցինք մի բացատում, որի կողքին որջ կար: Որջի խորքն ավելի մութ էր ու սարսափազդու: Որջը շրջապատված էր խիտ ծառերով, իսկ դրա վերևում լեռնալանջ էր: Մի տեսակ հեքիաթային տեղանք էր, կարծես հատուկ ստեղծված կացարան կենդանու համար, որտեղ նա կարող է պաշտպանվել վտանգից ու կողմնակի հայացքներից:

Մի քանի քայլ առաջանալով դեպի որջը՝ կանգ առանք, զգալով, որ այս ամենը կարող է շատ վատ ավարտվել մեզ համար: Ընկերս շշնջաց, որ հնարավոր է՝ հովազը որջի ներսում լինի և ավելի լավ է՝ հետ գնանք

տեսախցիկի հետևից, ապահով հեռավորության վրա նորից ամրացնենք այն, որպեսզի տեսագրենք հովազի շարժը որջ մտնելիս կամ դուրս գալիս:

– Ճիշտ ես, գնացինք, – շշուկով ասացի ես:

– Զգույշ, – շշնջաց ընկերս՝ մատնացույց անելով հետդարձի ոտնուղին, որպեսզի նույն ճամփով էլ հետ գնանք:

Ընկերս մի քանի քայլ ինձնից առաջ անցավ: Ես մի պահ կանգ առա ու շրջվեցի, քանի որ շրշյուն լսեցի: Հետ նայեցի դեպի որջը, թեև այնքան մութ էր, որ դժվար էր բան նկատելը: Շրջվեցի, որպեսզի գնամ ընկերոջս հետևից և հանկարծ քարացա տեղում… ընձառյուծը ուղիղ դիմացս էր: Նա այնպես էր փակել ճամփաս ու այնպիսի հայացքով էր նայում վրաս, որ չկարողացա անգամ գոռալ ընկերոջս, օգնության կանչել: Մենք նայում էինք միմյանց: Թվում էր, թե ժամանակը կանգ է առել: Ընձառյուծը հայացքով կարծես ուզում էր որսալ իմ միտքը, ընթերցել այն: Այս գիշատիչը, որը սովորաբար խուսափում է մարդու հետ հանդիպումից ու վախենում նրա դաժանությունից, այդ պահին կարծես իր ներսում հավաքելով համարձակությունն ու հետաքրքրասիրությունը՝ ուզում էր հասկանալ ինձ, «զրուցել» ինձ հետ: Ես անշարժ գամվել էի տեղումս և լուռ ու քարացած նայում էի նրան: Զգում էի, որ իմ լռությունը ինչ-որ տեղ նրան նյարդայնացնում էր, բայց և նկատելի էր, որ ինձնից վտանգ նա չէր զգում:

Ակնթարթներ տևած մեր այդ անձայն «երկխոսությունը» երկուսիս էլ կարծես խաղաղություն բերեց: Ընձառյուծը հասկացել էր, որ իրեն վնասելու մտադրություն չունեմ, ես էլ արդեն իրենից վտանգ չէի զգում. ինձ էլ մի պահ թվաց, որ նա ինձ չի վնասի:

Հանկարծ հնչեց կրակոց, և այդ քար լռությունը խախտեց օդում որոտացող գնդակը: Կրակոցը խախտեց այն ներդաշնակությունն ու խաղաղությունը, որ իշխում էին այդ մի քանի վայրկյանների ընթացքում: Ընձառյուծը վեր թռավ ու հանկարծակիի եկած մի պահ նորից նայեց ինձ՝ կարծես փորձելով հասկանալ, թե արդյո՞ք ես եմ իմ հետ բերել հրացանավոր մարդկանց: Նրա հայացքում մեկեն խառնվեցին հիասթափությունը, վախը, զայրույթը, և նրա հայացքն այնքան ահարկու դարձավ, որ ես վախեցա: Նայեցի նրան՝ փորձելով հավաստիացնել, որ ես ոչ մի կապ չունեմ այս իրարանցման հետ: Լսվեց երկրորդ կրակոցն ու բացականչություն.

– Ճանապարհը փակել ենք, էս կողմից դուրս պիտի գա, ուրիշ տեղ չունի փախնելու…

Ես հասկացա, որ որսագողերը, որոնք, ինչպես և վստահ էի, հաստատ իմացել էին, որ գործ ունեն ընձառյուծի հետ, հետապնդել էին կենդանուն, շրջափակել էին ընձառյուծի կացարանը և ելքը միայն մեկն էր, որտեղ էլ նրանք սպասում էին: Որսագողերը կռահել անգամ չէին կարող, որ ընձառյուծը մենակ չէ, ես էլ եմ այնտեղ: Գազանը իրեն հատուկ խուլ ձայնով մռնչաց ու ամբողջ մարմնով լարվեց: Նա և՛ ուզում էր այդ պահին պատժել ինձ, և՛ զգացվում էր, որ նա հասկանում է, որ ես մեղավոր չեմ: Փորձեցի վեր կենալ, նա նորից մռնչաց ու առաջ եկավ: Ես հետ-հետ գնացի, ինձ թվաց, որ վերջն է, հիմա կհարձակվի վրաս: Նա այնքան լարված էր այդ պահին ու այնպես էր այս ու այն կողմ նայում, որ ինձ վրա կարող էր հարձակվել հենց թեկուզ ինքնապաշտպանության բնազդից ելնելով: Սակայն այդ պահին ես հասկացա, որ նա ուրիշ մտադրությամբ է մռնչում, ընձառյուծն ասես ինձ հորդորում էր վեր չկենալ,

չկանգնել ամբողջ հասակով՝ որսագողերի ու նրանց արձակած գնդակներից պաշտպանվելու համար: Ես դա կարդացի նրա խառնված հայացքում: Մի՞թե գիշատիչը այդ պահին, երբ մազից էր կախված հենց իր կյանքը, փորձում էր ինձ էլ զգուշացնել ու պաշտպանել: Ընձառյուծը նորից մռնչաց ու ես անկախ ինձնից հնազանդվեցի: Գազանի հայացքը գոհունակություն արտահայտեց. նա կարծես ասում էր. «Վերջապես գլխի ընկար, զգույշ նստիր տեղդ, գլուխդ չհանես»: Եվ իսկապես, մեծ էր հավանականությունը, որ ինձ կդիպչեր գնդակներից մեկը կամ որ ինձ կսպանեին՝ ընձառյուծի տեղը դնելով: Խիտ թփուտներ արանքից դժվար է նշմարել՝ մարդ է, թե՞ գազան: Ձայները մոտենում էին, ու վիճակը դառնում էր անելանելի: Հանկարծ ընձառյուծը մի ոստյունով տեղից մոտ մի երկու մետր վեր թռավ դեպի իր որջը ծածկող հողաթումբը: Դա շատ վտանգավոր էր, քանի որ այդ դիրքում նա ուղիղ հրացանների փողերի դիմաց էր: Ընձառյուծը կարծես ուզում էր տեսնել, թե վտանգը որ կողմից է գալիս և ինչ պետք է անել, ուր փախչել: Ես նայեցի շուրջս՝ փորձելով նրա համար գտնել մի որևէ ելք, փախուստի մի որևէ միջանցք: Այդ պահին ես իմ կյանքի համար չէի անհանգստանում, ամբողջ ուշքս ու միտքս այն էր, որ նրան մի բան չլիներ: Այդ պահին ես և՛ վախեցած էի, և՛ խիստ զայրացած հարձակվող խուժանի վրա և, միևնույն ժամանակ, ինձ խիստ պարտավորված էի զգում կենդանու կյանքի համար, չէ՞ որ իմ ցեղի արարածներ էին այդ պահին նրան վտանգում, չէ՞ որ հազիվ էի իրեն համոզել, որ բոլոր մարդիկ չեն վտանգավոր, և ահա հարձակում մարդկանց կողմից:

Ձայներն արդեն այնքան մոտ էին, որ թվաց, թե ուր որ է՝ թփերի միջից դուրս կգան հրացանավոր մարդիկ: Ընձառյուծը արդեն խուճապահար ցատկեց մի անկյուն՝ կարծես գնահատելով փախուստի բոլոր հնարավոր ելքերը, հասկացավ, նկատեց ինչ-որ բան ու շրջվեց դեպի ինձ: Մարմնովս նորից վախի ալիք անցավ. Նա այս անգամ լրիվ ուրիշ հայացքով նայեց վրաս, ես զգացի, որ անելանելիության զգացումից ելնելով՝ նա ինչ-որ վճռական որոշում կայացրեց: Ինձ թվաց՝ հարձակման որոշում էր, այն էլ՝ այսպիսին. «Եթե մեռնել, ուրեմն քեզ էլ հետս կտանեմ»: Մի քանի րոպե առաջ նրա մեծահոգի ու անվնաս պահվածքը մի ակնթարթում չքացավ մտքիցս, քանի որ այդ վայրկյանին իմ առջև գազազած, վախեցած ու ծայրահեղ լարված գիշատիչ էր, որը գալիս էր ուղիղ ինձ վրա: Ես վեր կացա և, արդեն անտեսելով գնդակից սպանվելու վտանգը, հետ-հետ գնացի: Ընձառյուծը տեղից ցատկեց ուղիղ ինձ վրա: «Վե՛րջ», – մտածեցի ես ու ցած ընկա հուժկու գազանի մարմնի ծանրությունից: Նա իր թաթերով այնպես հրեց ինձ ու տապալեց գետնին, որ ոչինչ չհասցրեցի անել, միայն բնազդաբար ձեռքերս տարա դեպի նրա դեմքն ու պարանոցը՝ փորձելով պաշտպանվել, հետ մղել նրան: Ինձ թվաց, որ հիմա նա ինձ կպատառոտի իր սուր ճիրաններով ու ժանիքներով: Սկսեցի գոռալ, որ գոնե վախենա ու վեր կենա վրայիցս: Բայց ընձառյուծը ինձ ճանկռելու կամ կծելու միտք չուներ, նա հետ գնաց: Ձայները ուժգնացան այնքան, որ մի քանի մետր էր բաժանում մեզ որսագողերից: Հազիվ էի հասցրել ուշքի գալ ու փորձել վեր կենալ, երբ նա նորից հարձակվեց ու նորից ամբողջ ուժով հրեց ինձ: Այդ պահին գետնինը փախավ ոտքերիս տակից, ես ընկա մեջքի վրա ու սկսեցի ցած գլորվել: Պարզվում էր՝ որջի արևելյան կողմում

ոչ շատ խորը ձորակ կար, և նա հրում էր ինձ այդ կողմ: Ես գլորվելով ընկա այդտեղ: Հողը փափուկ էր ու խոտածածկ, առանձնապես չվնասվեցի, միայն քերծվեցին ձեռքերս ու դեմքս: Երբ գլուխս բարձրացրեցի, վերևում տեսա ընձառյուծին, նա մի ակնթարթ նայեց ինձ, լսվեց հերթական կրակոցը, ու ընձառյուծը չքացավ իմ տեսադաշտից: Ես ոռնացի ցավից, կարծես կորցրեցի հարազատի, կարծես աչքիս առաջ սպանվեց իմ ընկերը, հարազատը, արյունակիցը: Այդպիսի խորը ցավ ու ցասում չէի ապրել: «Չէ՜, չկրակե՜ք, թո՜ղ, չէ՜», – գոռալով ու կարծես չհամակերպվելով նրա սպանվելու մտքի հետ ես վեր թռա տեղից: Գոռալով սկսեցի մագլցել վեր՝ եղունգներով կառչելով ներքև սողացող հողից, բռնվելով աճող խոտերից ու ծառաթփերի դուրս ցցված արմատներից, ոտքերով վեր հրվելով ինչքան որ ուժ ունեի: Մի կերպ կարողացա վեր բարձրանալ և անմիջապես նայեցի որջի ուղղությամբ և դրա շուրջը՝ փորձելով գտնել ընձառյուծի դին. չգիտես ինչու, վստահ էի, որ նրան արդեն սպանել են: Այնքան մութ էր, որ մի քանի մետր այն կողմ արդեն համարյա բան չէր երևում: Այդ վայրկյանին կողքիս լսեցի գոռոց.

– Դու ո՞վ ես, էս ո՞վա, ուրդո՞ւց ե՞ս ստե հայտնվե, արա բա որ գյուլլեինք քեզ…», – զարմացած գոչեց մի ձայն:

Վեր կացա, կանգնեցի ամբողջ հասակով ու նկատեցի, որ շրջապատված եմ մի քանի հրացանավոր մարդկանցով: Նրանց վրայից ուղղակի «փչում էր» որսագող «կոչումը», նրանց դեմքերից չարություն ու դաժանություն էր թափվում, նրանք պատրաստ էին մի քանի հոգով հրացաններով գնդակահարել մի ընձառյուծի ու դեռ մի բան էլ գոհ մնալ իրենց «հերոսությունից»: Իմ վրա գոռացողը նորից խոսեց.

– Ո՞վ ես արա, ինչ գործ ունես ստեղ, բա որ քեզ գյուլլեինք:

Ես այդ պահին այնպես զայրացա նրանց ցինիկ ու նենգ պահվածքից, որ ամբողջ ցասումս դուրս ժայթքեց: Առյուծի պես մռնչալով նետվեցի այդ տականքի վրա և այնպես հարվածեցի ու տապալեցի գետնին, որ այդ վայրկյանին նրա աչքերը վախից, ասես, դուրս թռան, իսկ ընկնելիս էլ՝ կրակեց օդ: Մյուսները խառնվեցին ու վրա հասան՝ շրջապատելով ինձ:

– Գժվել ե՞ս, արա, – գոռում էին նրանք և փորձում բռնել ինձ, որ չշարժվեմ:

– Ո՞ւրա, ո՞ւրա, – գոռում էի ես, – ուրա՞, ո՞ւր եք տարել, ո՞վա սպանել, ձեզանից ո՞ր մեկը սպանեց…

Հասկացան, որ զայրույթս այնքան մեծ է, որ մի պահ հետ գնացին՝ խուսափելով նոր հարվածից:

– Ուրա՛, ուրա՛, – վեր կենալով ասաց նա, ում հարվածել էի, – եսիմ՝ ուրա՛, չջոգեցինք՝ ոնց կորավ: Կենդանի ես պաշտպանում, եքա մարդ ես, դրա եղածն ինչա՞, հայվանա, էլի…

– Հայվանը դո՛ւ ես, – ասացի, – քեզանից լավ հայվա՞ն, զենքը ձեռդ տղամարդու տեղ ես քեզ դրե՞լ, հինգ հոգով զենքերով ընկել եք էդ խեղճ կենդանու հետևից: Ե՞րբ եք սովորելու բնությանը հարգել, ե՞րբ եք հասկանալու, որ սենց այլևս չի՛ կարելի: Քեզանից օգտակար ա իրա գոյությունը, քեզանից ավելի շատա արժանի օդ շնչի…

Իմ զայրույթից նրանք մի տեսակ սթափվել էին: Ագրեսիային փոխարինելու էր եկել զգուշավորության զգացումն ու քաշվածությունը, քանի որ չէին պատկերացնում, որ ինչ-որ մեկը կհայտնվի այդտեղ ու այդպես անձնվիրաբար կպայքարի իրենց «ավարի» պաշտպա-

նության համար: Չէին պատկերացնում. դա դեռ ոչինչ, նաև սառել էին՝ գիտակցելով, որ ակամայից կարող է մարդասպան դառնային, եթե գնդակներից մեկը դիպչեր ինձ: Ամեն դեպքում նման դիմադրության էլ չէին սպասում և ապշել էին:

– Լավ թարգե՛ք, – գոչեց մեկ ուրիշը, – ախպեր գնա՛, շառ ե՞ս, գլխիցդ ձե՞ռ ես քաշել, կգյուլլե՛նք կթաղե՛նք ստե, տեղդ էլ չեն իմանա, գնա՛ քո ճամփով:

– Հաստա՞տ չեք խփել…, – նորից հարցրեցի այդ մարդուն, որը երևաց, որ քիչ թե շատ «ադեկվատ» պահվածք ուներ:

– Չէ՛, ախպեր, էս կողմերումա, հաստատ հեռու չի գնացել, բայց ոնց խփեցինք՝ չկպավ, փախա՛վ:

…Այդ դեպքից հետո շատ բաներ տեղի ունեցան. ընձառյուծի կողմից վիրավորված պահակը մահացավ, որսագողերին ձերբակալեցին նաև այլ կենդանիների սպանելու համար, մեծահարուստը փակեց իր կենդանաբանական այգին, որը ավելի շատ ուղղակի գազանանոց էր, ես գրեցի հոդվածս, պատրաստեցի մի քանի նյութ ընձառյուծի մասին, անգամ մրցանակների արժանացա պետական ու հասարակական բնապահպանական կառույցների կողմից՝ ընձառյուծի մասին այդ պատմության լուսաբանման և նրա համար անձնուրաց պայքարիս համար: Սակայն ամեն անգամ նրան մտաբերելիս՝ կարոտի ու տխրության զգացում էր պատում ինձ: Ուզում էր իմանալ ի՞նչ եղավ նրան, որտե՞ղ էր նա, արդյո՞ք դեռ Հայաստանում էր…

Եվ ահա, մեկ տարի անց մենք նորից ուղևորվեցինք դեպի այդ որջը, և, ո՛վ հրաշք, պարզվեց, որ մեզ արդեն ծանոթ արու ընձառյուծը ոչ միայն ողջ էր մնացել, այլև զուգավորվել էր այդ կողմերում հայտնված մի էգ ընձ-

առյուծի հետ, և նրանք արդեն երկու ձագուկ ունեին: Ընձառյուծների մի փոքրիկ ընտանիք, որտեղ մայրն ամբողջովին տրվել էր ձագերի խնամքին, իսկ հայրն ապրում էր մոտերքում՝ հսկելով տարածքը: Պարզեցինք նաև, որ նորածին ձագուկները ընդամենը մի քանի օրական էին: Կույր, խուլ, լիովին անօգնական ձագուկներին մայրը կերակրում, ջերմացնում, խնամում ու պահպանում էր անձնազոհաբար: Այդ ընթացքում նա ոչ սնվում էր, ոչ ջուր խմում և չէր թողնում որևէ մեկին մոտենալ որջին, անգամ իր զուգընկերոջը: Արուն ուղղակի մասնակցություն չէր ունենում ձագերի խնամքին ու դաստիարակությանը:

Երբ վերադառնում էինք, հանկարծ հեռվում մի պահ նկատեցինք արուին, որը մի արագ ցատկ կատարեց և կորավ ծառերի ստվերում: Ցատկի այդ հրաշալի պահը զորեղ ու բարեկազմ վայրի այս գիշատչի շարժման սոսկ մի պահը չէր: Սա վայրի բնության կյանքի մի մեծ ու, միևնույն ժամանակ, գեղեցիկ դրվագ էր, որը խորհրդանշում էր այդ կյանքի ռիթմը: Ընձառյուծի ցատկը, ասես, վայրի բնության կյանքի զարկերակը լիներ: Մենք պետք է պահպանենք բոլոր վայրի արարածներին՝ ապահովելու համար կյանքի զարկերակի անխախտ ռիթմը: Բոլոր վայրի արարածներն ունեն ապրելու իրավունք: Բնության կյանքի յուրաքանչյուր պահը շատ կարևոր է: Մենք պետք է հոգ տանենք վայրի բնության նկատմամբ, սիրենք ու հարգենք այն, անենք ամեն ինչ՝ այն պահպանելու համար: Մենք բնության մի մասն ենք, մեր կյանքը բնության պահերից մեկն է…

Մենք կարող ենք ու պետք է խաղաղ ապրենք կենդանիների հետ: Ցավոք, առ այսօր շարունակում ենք անխղճորեն սպանել ու վերացնել վայրի կենդանիներին, սպանել նրանց նետերով ու հրազենով, թունավորել նրանց

կամ էլ բուծել և ցինիկաբար որսալ կամ մորթել սպանդանոցներում: Սակայն, միևնույն է, բնությունը անչափ մեծահոգի է ու անտարբեր չէ այն բանի նկատմամբ, թե ինչ է անում մարդը, չէ՞ որ սպանելով կենդանիներին՝ մարդը վերացնում է նաև ինքն իրեն: Եկեք գտնենք բնության հետ խաղաղ ապրելու, հասկացողության, համերաշխության հասնելու բանալին, եկեք հասկանանք շրջակա միջավայրի նկատմամբ հարգալից ու հոգատար վերաբերմունքի իրական արժեքը: Միայն զննենք կենդանիներին, ուսումնասիրենք, հիանանք նրանցով և երբեք չանհանգստացնենք կամ վնաս չհասցնենք: Եկեք ապրենք նրանց հետ խաղաղության մեջ, քանի որ նրանք ունեն այդ խաղաղության կարիքը, որը կախված է մեզանից՝ մարդկանցից: Երբ մենք սիրում ու հարգում ենք կենդանիներին ու վնաս չենք պատճառում նրանց, նրանք վստահում, սիրում ու նվիրվում են մեզ: Եկեք ապրենք այնպես, որ արժանանանք այդ սիրուն ու նվիրումին, իսկ դրա համար հարկավոր է սիրել, գնահատել ու հոգ տանել:

Այս հիասքանչ կյանքը մենք ապրում ենք ընդամենը մի անգամ: Եվ ուրեմն արժանապատվորեն քայլենք մեզ վերապահված ճանապարհով՝ փորձելով ազնվորեն, պատվախնդիր ապրելակերպով և նույնքան պատվախնդիր գործունեությամբ հաստատել մեր տեղն այս արևի տակ, մեր ապրելու ու արարելու իրավունքը:

Միշտ համոզված եմ եղել և հիմա էլ համոզված եմ, որ բնության պահպանության մասին խոսել և բնության պահպանությամբ զբաղվել պետք է անընդհատ, քանի որ լռությունը, անտարբերությունը անպաշտպան են թողնում վայրի բնությանը, լռության գինը վայրի բնության խաղաղ ու անվնաս գոյության վտանգումն է, այս թեմայի մասին լռելը

ամեն վայրկյան վտանգում է վայրի կենդանիներից որևէ մեկի կյանքը, նրանցից յուրաքանչյուրի անվտանգ ու երջանիկ ապրելու իրավունքը: Մարդը և ընձառյուծը, մարդը և կենդանիները, մարդը և ամբողջ վայրի բնաշխարհը, մարդը և Երկիր մոլորակը… Հարաբերությունների այս բոլոր ձևաչափերում մարդն իր անխախտ և կարևոր դերակատարությունն ունի, նա է բոլոր այս հարաբերությունների ներդաշնակության պահպանման առանցքում, նա է այդ ձևաչափերի կայունության ու հարատևության երաշխավորը, նրանից են կախված Երկիր մոլորակի ներկան ու ապագան, նրա ձեռքերում է բնության գոյությունը կամ դրա վերացումը, նրան են ուղղված վտանգված կամ խոշտանգված կենդանիների հայացքները:

Վայրի կենդանիներից շատերը ապրել են մեզանից՝ մարդկանցից, առաջ և, ո՞վ գիտե, միգուցե ապրեն նաև մեզանից հետո: Այնպես որ, մենք իրավունք չունենք վերացնելու նրանց: Մինչդեռ անօրինական որսագողությունն ու բնության անհեռատես ու անխնա շահագործումը հաճախ հասնում են աղետալի ծավալների: Բնապահպանական կառույցների և բնասեր անհատների ջանքերին հակառակ՝ ոմանք շարունակում են շահույթ ստանալու նպատակով դաժանորեն սպանել կենդանիներին, հատել անտառները, աղտոտել գետերն ու լճերը՝ բնությունը համարելով իրենց սեփականությունը: Եթե այսպես շարունակվի, ապա մենք անվերադարձ կկորցնենք շատ վայրի կենդանիների, որոնք այսօր խիստ անպաշտպան են մարդու առջև:

Հայաստանի բացառիկ բնաշխարհը նույնպես ունի մեր բոլորի հոգածության, ուշադրության, խնամքի կարիքը: Յուրաքանչյուրս մեր տեղում և մեր կարողությունների չափով պետք է օգնենք բնությանը՝ հարատևելու: Ամեն մեկս

մեր մասով պետք է նպաստենք բնապահպանությանը: Եթե գործունեության բերումով ի զորու չենք զգալի օգնություն ցուցաբերելու կամ ակտիվորեն ներգրավվելու բնապահպանական արդի խնդիրների լուծման գործում, ապա պետք է մեր ունեցած հնարավորություններով ու լծակներով նպաստենք այդ խնդիրների վերհանմանը, բարձրաձայնմանը, լայնորեն արծարծմանը, գոնե պիտի ջանանք չփչացնել ու պահպանել այն ամենը, ինչը դեռ մնացել է, այն ամենը, ինչը մեր շուրջն է, այն ամենը, ինչը մենք պետք է փոխանցենք գալիք սերունդներին: Այս համատեքստում խոսքը վերաբերում է մեծ կամ փոքր բնապահպանական նպաստավոր քայլերին՝ սկսած ծառի ճյուղը անհիմաստ, անտեղի կոտրելը բացառելուց մինչև շրջակա միջավայրը, մեր հայրենի բնությունը մաքուր ու անվնաս պահելը, մեր զավակներին, մեր հայրենակիցներին բնության նկատմամբ սեր ու գորովանք փոխանցելը: Եթե սիրենք հայրենի բնությունը, ապա ավելի կսիրենք, կհարգենք ու կգնահատենք միմյանց, մեր հայրենիքը և պետությունը: Բնապահպանական խնդիրներ արծարծելը ոչ թե սոսկ հարգանք է բնությանը, այլև ձգտում՝ նպաստելու մեր հասարակության մեջ էկոլոգիական գիտակցության ձևավորմանն ու զարգացմանը: Բնասեր լինել, ունենալ էկոլոգիական գիտակցություն և կրել այդպիսի մշակույթ, չի նշանակում սոսկ խնամքով վերաբերմունք կենդանական ու բուսական աշխարհի նկատմամբ, այլև բարեկամեցություն, հանդուրժողականություն շրջակա միջավայրի նկատմամբ, սեր ու ներդաշնակություն մարդ–բնություն և մարդ–մարդ հարաբերություններում: Ունենալ էկոլոգիական գիտակցություն՝ նշանակում է կարողանալ անվնաս ու խաղաղ հարաբերվել թե՛ բնության, թե՛ շրջապատող մարդկանց և թե՛ ամբողջ աշխարհի հետ:

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՁԱՌՅՈՒԾ[16]. ՏԵՂԵԿԱՆՔ

Տարածվածությունը: Արեալը ներառում է Հյուսիսային Կովկասը, Անդրկովկասը, Արևելյան Թուրքիան, Հարավային Թուրքմենստանը, Իրանը, Աֆղանստանը:

Տարածվածությունը Հայաստանում: Բնակեցնում է Հարավարևմտյան և Հարավային Հայաստանը՝ «Խոսրովի անտառ» արգելոցի կենտրոնական և արևելյան հատվածներից մինչև հայ–իրանական սահմանը՝ Գեղամա, Զանգեզուրի, Վայոց ձորի, Բարգուշատի և Մեղրու լեռնաշղթաների սահմաններում:

Ապրելավայրերը: Չոր լեռնատափաստաններ, չորային նոսրանտառներ, հարավային լանջերի լեռնային, ենթալպյան և ալպյան մարգագետիններ:

Կենսաբանական առանձնահատկությունները: Մարգագետիններն օգտագործում է միայն ձնազուրկ ժամանակ տեղափոխվելու համար, քանի որ ձյունածածկը կարևոր սահմանափակող գործոն է: Շատ կարևոր է նաև դժվար հասանելի ժայռերի առկայությունը, որոնք հնարավորություն են տալիս ընձառյուծին բեզոարյան այծերին որսալու ժամանակ հանկարծակի դուրս գալու, ինչպես նաև հանգստանալու: Որսում են նաև վայրի խոզ,

---

[16] Առաջավորասիական (պարսկական, կովկասյան) ընձառյուծ (լատ.՝ Panthera pardus ciscaucasica կամ Panthera pardus saxicolor կամ Panthera pardus ciscaucasica): Առաջավոր Ասիայում բնակվող ընձառյուծի ենթատեսակ է, որը Կատվազգիների ընտանիքի ընձառյուծ կենդանատեսակի ամենախոշոր ենթատեսակներից մեկն է աշխարհում: Նախկին ԽՍՀՄ տարածքում առաջավորասիական ընձառյուծը հաճախ անվանվում էր Panthera pardus tulliana կամ Panthera pardus ciscaucasica, իսկ Panthera pardus saxicolor տերմինը օգտագործում էին արևմտյան մասնագետները: Ներկայումս լայն կիրառության մեջ են հատկապես կովկասյան ընձառյուծ, իսկ արևմտյան աղբյուրներում՝ պարսկական ընձառյուծ անվանումները (տես «Panthera pardus ssp. saxicolor» (http://www.iucnredlist.org/details/15961/0)):

այծյամ, հնդկական մացառախոզ, գորշ նապաստակ: Որպես բույն օգտագործում են քարանձավները, ժայռաճեղքերը, խիտ թփուտները:

Թվաքանակը և դրա փոփոխման միտումները: Հայաստանում պոպուլյացիայի առավելագույն մեծ թվաքանակը 7 առանձնյակ է: Ներկայիս տարածման տարածքը կազմում է 7497,2 կմ^2: Բնակեցման տարածքը կազմում է 2856,8 կմ^2: Այն ներառում է մշտական և ժամանակավոր բնակեցման տարածքները և միջանցքներ: Պոպուլյացիայի նման կառուցվածքի պատճառով լիովին կախված է միջանցքների գործառնությունից:

Վտանգման հիմնական գործոնները: Արեալի մասնատված լինելը, որի հիմնական պատճառը որսագողությունն ու մարդու տնտեսական գործունեությունն է:

Պահպանության միջոցառումները: Պահպանվում է «Խոսրովի անտառ» արգելոցում (23213.5 հա), «Արևիկ» ազգային պարկում (34401.8 հա), «Զանգեզուր» արգելավայրում (25870.64 հա), «Խուստուփ» արգելավայրում (մոտ 7000 հա): 2002 թվականից սկսած Հայաստանում WWF-ը աջակցում է ընձառյուծի պահպանությանը և ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ կատարում է տեսակի մոնիտորինգ արեալի սահմաններում: Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ՝ արեալի մասնատման գործոնը նվազեցնելու նպատակով: Մասնավորապես, անհրաժեշտ է ապահովել կերային հարուստ բազա ունեցող բիոտոպերի միավորումը խոշոր և մանր պահպանվող տարածքների ցանցում:

Ներկայումս WWF-ը սկսում է «Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցություն» տարածաշրջանային ծրագիրը, որի արդյունքում

ստեղծված միջանցքները կծառայեն տարածաշրջանային մակարդակով պահպանվող տարածքների ցանցերի ստեղծման նպատակին՝ այդ կերպ նպաստելով դրանց կայունության տևականությանը:

Անհրաժեշտ է նաև ուժեղացնել որսագողության, լեռնագործության, ճանապարհաշինության, արածեցման և այլ մարդածին գործունեության հսկողության և կարգավորման ուղղությամբ իրականացվող աշխատանքները[17]:

[17] Աղբյուրները՝ «Ընձառյուծ» (http://www.mnp.am/red_book_fauna/arm/a344.html) և WWF-Հայաստան:

Կովկասյան ընձառյուծ | Кавказский леопард | Caucasian leopard (Panthera pardus ciscaucasica)
© WWF-Armenia, 2013

Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում WWF-Հայաստանին՝ կովկասյան ընձառյուծի լուսանկարներ տրամադրելու համար:

Կովկասյան ընձառյուծ | Кавказский леопард | Caucasian leopard (Panthera pardus ciscaucasica)
© WWF-Armenia, 2013

Автор выражает глубокую благодарность Армянскому филиалу Всемирного фонда дикой природы (WWF-Armenia) за предоставление фотографий кавказского леопарда.

Կովկասյան ընձառյուծ | Кавказский леопард | Caucasian leopard (Panthera pardus ciscaucasica)
© WWF-Armenia, 2014

The author express his deep appreciation to the WWF-Armenia for providing the photos of the Caucasian leopard.

Կովկասյան ընձառյուծ | Кавказский леопард | Caucasian leopard (Panthera pardus ciscaucasica)
© WWF-Armenia, 2014

Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում WWF-Հայաստանին՝ կովկասյան ընձառյուծի լուսանկարներ տրամադրելու համար:

WWF-Ի ԿՈՂՄԻՑ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՁԱՌՅՈՒԾԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՁԱՆՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ[18]

Կովկասում ընձառյուծը այսօր անհետացման եզրին գտնվող կենդանատեսակ է, ամբողջ էկոտարածաշրջանում մնացել են միայն առանձին փոքր խմբեր:

Վերջին տասը տարիների ընթացքում WWF-ը զգալի աշխատանք է կատարել Կովկասում ընձառյուծի կարգավիճակը գնահատելու համար, ինչպես նաև ծրագրեր է մշակել և իրականացրել վերջինիս պահպանության համար: WWF-ը IUCN-ի կատվազգիների գծով մասնագետների խմբի հետ միասին նախաձեռնել է «Ընձառյուծի պահպանության տարածաշրջանային ռազմավարության» զարգացման ծրագիր՝ ընդգրկելով կովկասյան էկոտարածաշրջանի տարբեր շահագրգիռ կողմերի: Այդ ռազմավարության հիման վրա WWF-ը մշակել է «Ընձառյուծի պահպանության ազգային գործողությունների պլան» տարածաշրջանի յուրաքանչյուր երկրի՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի համար, որը հաստատվել է այդ երկրների պետական մարմինների կողմից:

2002 թվականից ի վեր WWF-ը համագործակցել է ՀՀ բնապահպանության նախարարության, բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ), Բնապահպանության պետական տեսչության, տեղական համայնքների, ոչ պետական կազմակերպությունների և գիտական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով Հայաստանի հարավում խթանել ընձառյուծի պահպանությանը: WWF-ի և

[18] Աղբյուրը՝ «WWF-ի ջանքերը ընձառյուծի պահպանության ուղղությամբ տալիս են իր արդյունքները» (http://armenia.panda.org/?214876%2FWWF):

ՀՀ բնապահպանության նախարարության սերտ համագործակցության շնորհիվ մեծ նվաճումներ կան Հայաստանի հարավում ԲՀՊՏ-ների համակարգի զարգացման առումով:

Հայաստանի հարավում չորս նոր ԲՀՊՏ է ստեղծվել («Արևիկ» ազգային պարկը, «Զանգեզուր» և «Խուստուփ» պետական արգելավայրերը, «Գնիշիկ» պահպանվող լանդշաֆտը), հզորացվել է «Շիկահող» պետական արգելոցը: Դրանք ընդգրկում են ընձառյուծի հիմնական ապրելավայրերը՝ 85366 հա ընդհանուր տարածքով, որը կազմում է հանրապետության տարածքի 2,9 %-ը: Այս ամենը ստեղծվել է տարբեր դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, ներառյալ՝ CEPF-ը, UNDP-ը, GEF-ը, Նորվեգիայի կառավարությունը, CNF-ը, WWF Գերմանիան, WWF Շվեյցարիան և WWF Նորվեգիան:

Ընձառյուծի պահպանությունը հզորացնելու նպատակով WWF-ը աջակցել է «Խոսրովի» և «Շիկահողի» պետական արգելոցներին, «Արևիկ» ազգային պարկին, «Զանգեզուր» և «Խուստուփ» արգելավայրերին՝ տրամադրելով սարքավորումներ և համապատասխան հարմարություններ (տեսուչների համար պահակատներ, ամենագնաց ավտոմեքենաներ, ճանապարհային արգելափակոցներ, հեռադիտակներ, ֆոտոխցիկներ և այլն): ԲՀՊՏ-ներից դուրս ընձառյուծի պահպանությունն ապահովելու համար WWF-ը երեք մարզերի Բնապահպանության պետական տեսչություններին (Սյունիք, Վայոց Ձոր և Գեղարքունիք) տրամադրել է անհրաժեշտ սարքավորումներ (ամենագնաց ավտոմեքենաներ, հեռադիտակներ, ֆոտոխցիկներ և այլն):

WWF-ի փորձագետները ԲՀՊՏ-ների անձնակազմի հետ համատեղ պարբերաբար կատարում են ընձառյուծի և նրա որսատեսակների մոնիտորինգ: 2005 թվականից

Հայաստանում ընձառյուծի հիմնական ապրելավայրերում WWF-ը տեղադրել է ֆոտոխցիկներ, որոնց շնորհիվ պարբերաբար ստանում է տեղեկույթ տարածքում հանդիպող կենդանիների, այդ թվում՝ ընձառյուծի և նրան որս հանդիսացող տեսակների վերաբերյալ: Այս տեսակի կարգավիճակի, ապրելավայրերի և պահպանության միջոցառումների մասին տեղեկույթը ամփոփվել և հրատարակվել է IUCN Cat News-ի առանձին համարում:

Իրականացվել են հանրային իրազեկման մակարդակի բարձրացման և տեղեկատվական մի շարք գործողություններ (դպրոցական կրթական ծրագրեր, քարոզարշավներ, հրատարակումներ, մրցույթներ և այլն): Ընձառյուծի ապրելավայրերին կից համայնքներում համայնքային զարգացման տարբեր ծրագրեր են իրականացվել՝ տեղի բնակչությանը այլընտրանքային եկամուտի միջոցներով ապահովելու նպատակով:

Բոլոր այս ջանքերը տվեցին խոստումնալից արդյունք՝ ընձառյուծը զգալիորեն հաճախ հայտնվեց Հայաստանի հարավում, հատկապես՝ վերջին տարվա ընթացքում: 2012 թվականի հոկտեմբերից մինչև 2013 թվականի հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում WWF-ը գրանցել է որոշ տվյալներ, որոնք վկայում են ընձառյուծի ներկայությունը վերոնշյալ տարածքում՝

- 23.10.2012 - ոտնահետքերի լուսանկար Հայաստանի հարավում (ենթադրաբար՝ հասուն արու),
- 17.12.2012 - ոտնահետքերի (ենթադրաբար՝ հասուն արու) և որսի մնացորդների (վարազ) լուսանկար Հայաստանի հարավում,

- 15.07.2013 - ոտնահետքերի լուսանկար (ենթադրաբար՝ երիտասարդ արու) Հայաստանի հարավում,
- 14.09.2013 - հասուն արու ընձառյուծի լուսանկար Հայաստանի հարավում,
- 16.09.2013 - հասուն արու ընձառյուծի լուսանկար Հայաստանի հարավում,
- 17.09.2013 - հասուն արու ընձառյուծի երկու լուսանկար Հայաստանի հարավում,
- 24.09.2013 - երիտասարդ էգ ընձառյուծի լուսանկար Հայաստանի հարավում:

Այնուամենայնիվ, դեռ պետք է շարունակական աշխատանքներ տարվեն «Կովկասում ընձառյուծի պահպանության տարածաշրջանային ռազմավարության» ծրագրում ամրագրված նպատակն իրականացնելու համար՝ «Իրականացնել ընձառյուծի կենսունակ մետապոպուլյացիայի, դրանց վայրի որսատեսակների և ապրելավայրերի պահպանությունն ու կայուն կառավարումը, ինչպես նաև տեղական համայնքների հետ համատեղ ստեղծել գոյատևման կայուն մեխանիզմներ ամբողջ կովկասյան էկոտարածաշրջանում»: Այս առումով կարևոր է գործընկերների ներգրավումը՝ համախմբելով ուժերն ու կոորդինացնելով գործունեությունները ընձառյուծի պահպանությունն իրականացնելու համար:

Գլխավոր նպատակին հասնելու համար WWF-ը շարունակելու է իր աշխատանքները՝ գործընկերների հետ համատեղ Հայաստանում ԲՀՊՏ-ների համակարգը հզորացնելու, ինչպես նաև էկոլոգիական ցանցի ամրապնդման ուղղությամբ՝ էկոլոգիական միջանցքներ ստեղծելով երկրի հարավում:

WWF-Ի ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ՓԱՍՏՈՒՄ ԵՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆՁԱՌՅՈՒԾԻ ՄԵԿ ԱՐՈՒ ԵՎ ԵՐԿՈՒ ԷԳ ԱՌԱՆՁՆՅԱԿՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՎՈՒՄ[19]

2013 թվականի սեպտեմբերից մինչև 2014 թվականի ապրիլը WWF-ին հաջողվել է թաքնված տեսախցիկների միջոցով ստանալ կովկասյան ընձառյուծի 14 նկար: Նկարների վերլուծությունները վկայում են այն մասին, որ առնվազն մեկ արու և երկու էգ շուրջ մեկ տարի բնակվում են Հայաստանի հարավում: Դա հույս է տալիս ակնկալելու, որ 2014 թվականին էգ ընձառյուծները ձագեր կունենան, ինչն իր հերթին ավելի մեծ ուշադրություն և ջանքեր կպահանջի տարածաշրջանում ընձառյուծի պահպանությունը ավելի հզորացնելու համար: Համաձայն թաքնված տեսախցիկների նկարների և դաշտային մոնիտորինգի տվյալների՝ ընձառյուծի որսատեսակների (բեզոարյան այծերի, Հայկական մուֆլոնների) քանակը նույնպես աճել է:

Այս ձեռքբերումները WWF-ի երկարաժամկետ աշխատանքի արդյունքն է սկսած 2002 թվականից: Աշխատանքները ներառում են նաև բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) պահպանության հզորացումը («Խոսրովի անտառ» և «Շիկահող» արգելոցներ) և նոր ԲՀՊՏ-ների ստեղծումը («Արևիկ» ազգային պարկ, «Զանգեզուր» և «Խուստուփ» արգելավայրեր), որոնք ընդգրկում են ընձառյուծի հիմնական ապրելավայրերը: Վերոնշյալ աշխատանքները իրականացվել են ՀՀ բնապահ-

[19] Աղբյուրը՝ «WWF-ի մասնագետները փաստում են կովկասյան ընձառյուծի մեկ արու և երկու էգ առանձնյակների առկայությունը Հայաստանի հարավում» (http://wwf.panda.org/hy/?220314/WWF----------):

պանության նախարարության, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, Կովկասի բնության հիմնադրամի, Անդրսահմանային միացյալ քարտուղարության, ԲՀՊՏ-ների, Բնապահպանական պետական տեսչության, համայնքների և գործընկեր հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շնորհիվ:

2014 թվականին WWF-ը տարածաշրջանային և ազգային աշխատանքային հանդիպումներ կանցկացնի՝ մշակելով նոր «Ընձառյուծի պահպանության տարածաշրջանային ռազմավարություն» և վերջինիս հիման վրա նոր «Ազգային գործողությունների ծրագիր»: Միևնույն ժամանակ, WWF-ը շարունակելու է իր աշխատանքները (գործընկերների հետ համատեղ) Հայաստանում ԲՀՊՏ-ների համակարգը հզորացնելու, ինչպես նաև էկոլոգիական ցանցի ամրապնդման ուղղությամբ՝ էկոլոգիական միջանցքներ ստեղծելով երկրի հարավում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտիքի խոսք ……..……..……..……... 3

Հեղինակի կողմից …..……..……..….. 5

Ամբերդ. Քարաշեն լեռը …….……..….. 11

Ամբերդ. տեղեկանք ……..….. 36

Բծավոր տեսիլքը ……..……..……..….. 39

Կովկասյան ընձառյուծ. տեղեկանք ……..……..….. 78

WWF-ի կողմից կովկասյան ընձառյուծի պահպանության ուղղությամբ գործադրվող արդյունավետ ջանքերի վերաբերյալ ……..……..….. 85

WWF-ի մասնագետները փաստում են կովկասյան ընձառյուծի մեկ արու և երկու էգ առանձնյակների առկայությունը Հայաստանի հարավում ……..……..….. 89

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ

ԼՌՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ

Խմբագիր՝
Արմինե Մովսիսյան

Տեխնիկական խմբագիր՝
Վահե Խալաֆյան

Շապիկի մտահղացումը, գրքի շարվածքը և համակարգչային ձևավորումը՝ **Առլեն Շահվերդյանի**

Շապիկի լուսանկարը՝ **© WWF-Հայաստան, 2014**
The book cover's picture by **© WWF-Armenia, 2014**

Գրքում ներկայացված թեմաների վերաբերյալ տես նաև հեղինակի անձնական բլոգ-կայքում՝ http://arlenshah.wordpress.com

Հեղինակի էջը «Facebook»-ում՝
https://www.facebook.com/ArlenShahverdyan

«Twitter»-ում՝
http://twitter.com/#!/ashahverdyan

Էլ. փոստ՝
shahverdyan.arlen@gmail.com

Հանձնվել է տպագրության 06.08.2014:
Տեքստ՝ 80 + 12 էջ ներդիր: Տպաքանակը՝ 500:
Տառատեսակները՝ «Arial Unicode», «Arial Armenian», «ArTarumianIshxan», «ArTarumianHarvats», «ArTarumianHelvetica», «ArTarumianBakhum», «Arial», «Times New Roman»:
Տպագրությունը՝ օֆսեթ:

Տպագրվել է «ՍԱՄԱՐԿ» տպարանում: